Programmatic Cooperation Framework for
Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ

ԿԱՐԾԻՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատրաստված է Ջերեմի Մքբրայդի և Լորենա Բախմայեր Ուինթերի մեկնաբանությունների հիման վրա

Հունվար 2017

Ամփոփագիր

Սույն Կարծիքում քննարկվում է Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի համապատասխանությունը եվրոպական չափանիշներին: Փաստաթուղթը կազմված է Ընդհանուր մեկնաբանություններից, որոնք վերաբերում են այն փոփոխությունների բնույթին, որոնք ուժի մեջ կմտնեն օրենքի նախագծի ընդունմամբ, քրեական արդարադատության գործընթացի կառուցվածքին, որ մարմնավորում է օրենքի նախագիծը, ինչպես նաև այնպիսի հարցերի, որոնց անհրաժեշտ է անդրադառնալ եվրոպական չափանիշների պահանջների կատարման նպատակով: Դրանք այնուհետև քննվում են առավել կոնկրետ առումներով՝ նախագծի բաժին առ բաժին վերլուծության միջոցով, որը սևեռվում է միայն խնդրահարույց թվացող դրույթներին և դրանց հանգուցալուծման առաջարկություններ ներկայացնում: Ուշադրության արժանի առավել կարևոր են այն խնդիրները, որոնք վերաբերում են ձերբակալմանը հետևած իրավունքներին և քննչական տարբեր միջոցների նկատմամբ դատական վերահսկողության իրականացմանը: Այլ խնդիրները, որոնց անհրաժեշտ է անդրադառնալ, ներառում են որոշակի կետերի առավել հստակեցման կամ սահմանված չափանիշների մշակման անհրաժեշտությունը: Բացի այդ, կան դեպքեր, երբ դրույթների փոքր-ինչ վերակազմավորումը գուցե օգտակար կլիներ, և դեպքեր, երբ որոշ դրույթներ կամ դրանց ասպեկտները, կարծես, ավելորդ են: Եվ վերջապես կան տարբեր կետեր, որտեղ անհրաժեշտ է պարզաբանում, թե ինչ են նախատեսում կամ ինչպես են առնչվում այլ դրույթների հետ: Առաջարկություններից կամ առաջարկվող գործողություններից ոչ մեկը, ըստ էության, չպետք է մեծ դժվարություն ներկայացնի ընդունման առումով: Դրանց ընդունումը լավ օրինագիծը կվերածի եվրոպական չափանիշներին լիովին համահունչ Քրեական դատավարության օրենսգրքի՝ երաշխավորելով, որ Հայաստանում քրեական արդարադատության համակարգի նկատմամբ առկա է հանրային լայն վստահություն:

Ա. Ներածություն

1. Սույն կարծիքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգրքի նախագծին («Օրենսգրքի նախագիծ»), որը մշակել է Արդարադատության նախարարության աշխատանքային խումբը: Օրենսգրքի նախագիծը, կրկին գործողության մեջ դնելով 1998թ. հուլիսի 1-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգրքի որոշ դրույթներ, միևնույն ժամանակ նախատեսում է մի շարք դրույթների փոխարինումը նոր դրույթներով:

2. Սույն մեկնաբանություններում վերանայվում է Օրենսգրքի նախագծի համապատասխանությունը եվրոպական չափանիշներին, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային («Եվրոպական կոնվենցիա») և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի («Եվրոպական դատարան») նախադեպային իրավունքին:

3. Օրենսգրքի նախագծի գնահատմանն առնչվող մեկ այլ կարևոր նկատառում է իրավական որոշակիության անհրաժեշտությունը, այսինքն՝ առանց կամայական կամ անկանխատեսելի պետական միջամտության՝ կայուն շրջանակներում գործելու կարողությունը, և թե որքանով են առաջարկվող փոփոխությունները բավարարում հստակության և կանխատեսելիության պահանջները:

4. Նշումներ չեն կատարվի Օրենսգրքի նախագծի այն դրույթների առնչությամբ, որոնք համարվում են պատշաճ կամ ոչ խնդրահարույց, եթե դա կարևոր չլինի այլ դրույթների վրա դրանց ունեցած ազդեցության գնահատման համար:

5. *Առաջարկությունները՝ կապված որևէ գործողության՝ փոփոխության, վերանայման կամ տեքստից ջնջելու հետ, ինչը կարող է անհրաժեշտ լինել Եվրոպական չափանիշներին համապատասխանության ապահովման նկատառումով, գրված են շեղատառերով:*

6. Կարծիքում նախևառաջ անդրադարձ է կատարվում Օրենսգրքի նախագծին վերաբերող մի շարք ընդհանուր հարցերի: Այնուհետև բաժին առ բաժին քննվում են առաջարկվող դրույթները: Կարծիքը եզրափակվում է

եվրոպական չափանիշներին առաջարկվող դրույթների համապատասխանելիության ընդհանուր գնահատմամբ։

7. Սույն կարծիքը հիմնված է Օրենսգրքի նախագծի ոչ պաշտոնական անգլերեն թարգմանությանը։

8. Կարծիքի նախապատրաստման համար շատ օգտակար են եղել Օրենսգրքի նախագծի առավել վաղ տարբերակի դրույթների վերաբերյալ աշխատանքային խմբի անդամների հետ կազմակերպված քննարկումները 2016թ. հունվարի 21-22-ը Ստրասբուրգում և 2016թ. ապրիլի 15-17-ը Երևանում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում։

9. Մեկնաբանությունները, որոնց հիմնված է Կարծիքը, պատրաստել են Ջերեմի ՄքԲրայդը[1] և Լորենա Բախմայեր Ուինթերը[2]՝ Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի Արևելյան գործընկերության 2015-2017 թվականների ծրագրային համագործակցության շրջանակներում իրականացվող՝ «Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» ծրագրի աջակցությամբ։

Բ. Ընդհանուր մեկնաբանություններ

10. Օրենսգրքի նախագիծն արտացոլում է Հայաստանի Հանրապետության իշխանությունների, մասնավորապես՝ այն մշակած աշխատանքային խմբի կատարած մեծածավալ աշխատանքը։ Մեծ ուշադրություն է դարձվել՝ փորձելու և երաշխավորելու, որ օրենսգրքում հաշվի են առնվում եվրոպական չափանիշները, ներառյալ՝ Եվրոպական դատարանի զարգացող նախադեպային իրավունքը, և այն հիմնվում է 1998թ. Օրենսգրքով ուժի մեջ մտած բարեփոխումների վրա։ Արդյունքում կարելի է համարել, որ այն, ընդհանուր առմամբ, նախատեսում է քրեական գործերի քննության և վճիռների կայացման համար հավասարակշռված կանոնների շարք։

11. Դրական զարգացումները ներառում են՝

[1] Փաստաբան, Մոնքտոնի պալատներ, Լոնդոն և Կենտրոնական եվրոպական համալսարանի հրավիրված պրոֆեսոր, Բուդապեշտ։
[2] Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանի իրավաբանական ֆակուլտետի պրոֆեսոր, Իսպանիա։

- ապացույցների բացառման կանոնի ընդունումը՝ կապված այն ցուցմունքների հետ, որոնք ստացվել են, երբ մեղադրյալը հարցաքննվել է որպես վկա, երբ, ըստ էության, կասկածվել է տվյալ հանցագործության կատարման մեջ (Հոդված 97.3(4)),
- ապացույցների բացառման կանոնը՝ կապված պաշտպանի բացակայությամբ մեղադրյալի տված և չդեպոնացված ցուցմունքների հետ, եթե մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանցից (Հոդված 97.6),
- դրույթներ՝ կապված իրեղեն ապացույցներ հանդիսացող առգրավված առարկաների պահպանման, ինչպես նաև ոչնչացման հետ, երբ դրանց պահպանումը պատշաճ չէ, չափից վտանգավոր է կամ ծախսատար (Հոդված 98),
- անձի՝ հատուցում ստանալու իրավունքի ճանաչումը, ում իրավունքները խախտվել են ձերբակալման ընթացքում (Հոդված 288.8), և
- վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հետ կապված՝ «օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու» սահմանումը (Հոդված 380)։

12. Այնուամենայնիվ, այս առանձին օրինակները նշելիս հաշվի չի առնվել այն փաստը, որ Օրենսգրքի նախագծում ավելի վաղ ներկայացված տարբեր առաջարկությունները հանվել են, երբ ակնհայտ է դարձել, որ դրանք կամ ուղղակիորեն կհակասեն Եվրոպական կոնվենցիայի պահանջներին կամ կառաջացնեն Եվրոպական կոնվենցիայի պահանջների հետ հակասության լուրջ վտանգներ։ Բացի այդ, կարծիքում չեն ճանաչվում տարբեր հարցերին առավել ճշգրիտ անդրադառնալու և տարբեր դրույթների միջև փոխհարաբերության կազմակերպման գործում արձանագրված աստիճանական բարելավումները։

13. Մինչդատական վարույթը սկսվում է նախաքննական փուլով, որը նախաձեռնվում է *ի պաշտոնե* (*ex officio)* կամ հաղորդման հիման վրա։ Այս քննության շրջանակներում կարող է նաև լինել հետաքննություն (այսինքն՝ գաղտնի գործողությունների նախաձեռնում և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ)։ Նախաքննական այս փուլն իրականացվում է Դատախազի վերահսկողությամբ, ով որոշում է կայացնում քննությունները միացնելու, ինչպես նաև քննությունը վերատեղակայելու մասին, եթե հանցագործությունները կատարվել են տարբեր վայրերում։ Դատախազը նաև որոշում է կայացնում քննչական տարբեր մարմինների իրավասության

հարցերի վերաբերյալ։ Թեև դատախազների և քննիչների անկախությունը երաշխավորված է, որոշակի ուշադրություն է անհրաժեշտ դարձնել ենթակա դատախազներին կամ քննիչներին տրվող հրահանգների ձևերին՝ երաշխավորելու, որ նրանց անկախությունը հարգվում է։

14. Քրեական հետապնդումը սկսվում է միայն այն ժամանակ, երբ ներգրավվում է կոնկրետ մեղադրվող անձ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ, կամ Դատախազի որոշմամբ՝ վերջինիս սեփական նախաձեռնությամբ։

15. Տարբեր բարելավումներ են պահանջվում վարույթի մասնակիցների, մասնավորապես՝ ձերբակալված անձի և մեղադրյալի իրավունքների հետ կապված։ Վերջինս իրավունք ունի միայն տեղեկացվելու և ծանոթանալու գործի նյութերին նախաքննության ավարտման պահից[3]։ Եթե մինչ այդ կասկածյալը չի ձերբակալվել, ապա նա չի ներգրավվի քննության մեջ և նրան հասանելի չի լինի գործին վերաբերող որևէ ապացուցողական նյութ։ Կասկածյալին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման ցանկացած հապաղում կարող է նշանակել, որ մինչդատական փուլում նրա՝ պաշտպանության իրավունքը արդյունավետորեն հետաձգվելու է մինչև այդ պահը։ Քանի որ մրցակցային մոտեցումը պետք է խթանվի մինչդատական փուլում, ապա պրակտիկայի առումով կարևոր է չհապաղել անձին որպես մեղադրյալ ճանաչելուց, եթե հանցագործության կատարման մեջ նրա հավանական ներգրավվածության մասին բավարար ցուցումներ կան։

16. Ապացույցների հավաքման, ներկայացման և գնահատման կանոնները, ընդհանուր առմամբ, համարժեք և ճշգրիտ են մշակված, սակայն կարելի է կամ լավ կլիներ կատարել տարբեր բարելավումներ, որոնց մասին նշված է հաջորդ բաժնում։ Հատկապես մտահոգիչ են քննական տարբեր միջոցառումների նկատմամբ դատական վերահսկողության կարգավորումները, ինչպես նաև հետախուզական նյութերի հնարավոր օգտագործումը։ Որոշ բարելավումներ են նաև պահանջվում՝ կապված անչափահասների հարցաքննության և երրորդ կողմ ներկայացնող անձանցից տեղեկություններ պահանջելու կանոնների հետ։

17. Բացի այդ, դատավարության փուլը ղեկավարող կառուցվածքի և սկզբունքների կանոնակարգման խոշոր թերություններ չկան։ Սակայն առկա են որոշ դեպքեր, երբ դատավորի համար նախատեսված դերը կարող է հակասել մրցակցային դատավարության սկզբունքին՝ հարցականի տակ

[3] Հոդված 43.22։

դնելով նրա անկողմնակալությունը։ Բացի այդ, դատավարության փուլը երեք լսումների բաժանելը՝ նախնական լսումներ, հիմնական լսումներ և լրացուցիչ լսումներ, կարող է ոչ միշտ ցանկալի լինել արդյունավետության տեսանկյունից։ Ավելին, գուցե նպատակահարմար է վերանայել այն հարցերի շրջանակը (լայնությունը), որոնց կարելի է անդրադառնալ վճռաբեկության փուլում։

18. Հետևյալ բաժնում տեղ գտած մեկնաբանությունները ներառում են Օրենսգրքի նախագծի որոշ ասպեկտներ, երբ առկա են Եվրոպական չափանիշների հետ փաստացի կամ հավանական հակասություններ, սակայն մի շարք դեպքերում նշված են այն խնդիրները, որտեղ պարզաբանման կարիք կա՝ գուցե թարգմանության հետ կապված խնդիրների արդյունքում, երբ ձևակերպումը կարելի է բարելավել կամ երբ որոշակի տեքստ ավելորդ է։

Գ. Բաժին առ բաժին վերլուծություն

19. Կարծիքի այս բաժինը հերթականությամբ հետևում է Օրենսգրքի նախագծի բաժիններին՝ անդրադառնալով միայն ուշադրություն պահանջող խնդիրներին։

Բաժին 1. Քրեական դատավարության օրենսդրությունը և քրեական վարույթը

Հոդված 4. Քրեական դատավարության օրենսգրքի գործողությունը ժամանակի մեջ

20. Այս դրույթի 2-րդ պարբերության մեջ ամրագրումը, թե ապացույցի թույլատրելիությունը որոշվում է այն ձեռք բերելու պահին գործող օրենքով, առաջին հայացքից խնդրահարույց չի թվում։ Այնուհանդերձ, նման ամրագրումը հաշվի չի առնում այն հնարավորությունը, որ խնդրո առարկա օրենքը, որը, մասնավորապես, ամրագրված է 1998թ. Օրենսգրքով, կարող է համատեղելի չլինել Եվրոպական դատարանի մշակած չափանիշներին, ուստի նման ապացույցի թույլատրելիությունը կհակասի Եվրոպական կոնվենցիայի պահանջներին։ Թեև 1-ին հոդվածով նախատեսվում է, որ

քրեական դատավարությունը կարգավորվում է, *inter alia*, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (ինչը, անշուշտ, ներառում է Եվրոպական կոնվենցիան), նախընտրելի կլիներ, որ ապացույցների թույլատրելիությունը հստակորեն ենթակա լիներ Եվրոպական կոնվենցիայի պահանջներին։

21. *Ուստի 2-րդ պարբերությունը պետք է փոփոխվի՝ բացահայտ դարձնելու, որ ապացույցների թույլատրելիությունը բոլոր վարույթներում ենթակա է Եվրոպական կոնվենցիայի պահանջներին՝ անկախ նրանից, թե երբ է ձեռք բերվել տվյալ ապացույցը։*

Հոդված 6. Սույն օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները

22. Սույն դրույթով նախատեսված սահմանումների մի շարք ասպեկտներ ուշադրություն են պահանջում։

23. Առաջինը, 1.2-րդ և 1.3-րդ ենթապարբերություններում «քրեական վարույթի նյութեր» և «քրեական գործ» երկու եզրերի համանման, բայց ոչ նույնական սահմանումները կարող են շփոթության աղբյուր հանդիսանալ։ Իրականում Օրենսգրքի նախագծում առավելապես օգտագործվում է վերջին եզրը, և վեց դրույթներից, որոնցում այն օգտագործված է, ընդամենը երկուսն են, ըստ էության, համահունչ թվում դրա սահմանմանը[4]։

24. Երկրորդը, 1.10-րդ և 1.11-րդ ենթապարբերություններում պատշաճ չի թվում դատարանը և դատավորը վկայակոչել, համապատասխանաբար՝ որպես «պետական մարմին» և «պետական պաշտոնատար անձ»։ Այս դրույթներում «պետական մարմին» և «պետական պաշտոնատար անձ» եզրերի կիրառումն ավելի համահունչ կլինի դատական անկախության հասկացությանը։

25. Երրորդը, 1.30-րդ ենթապարբերությունում «քրեական հետապնդման ենթակա մահացած անձ» հասկացությունը Եվրոպական դատարանի կողմից պատեհ չի համարվում, քանի որ այն մի շարք առիթներով ընդգծել է, որ «քրեական իրավունքի հիմնարար կանոն է հանդիսանում այն, որ քրեական պատասխանատվությունը դադարում է քրեական հանցագործություն կատարած անձի մահվան հետ»[5]։ Հետևաբար, մահացած անձի քրեական

[4] Մասնավորապես՝ 352.3 և 448.1(7) հոդվածներում։ Մյուսները 289.4, 472.1, 472.6, 472.8 և 472.11 հոդվածներում են։

[5] Տես օրինակ՝ *Վուլախը և այլոք ընդդեմ Ռուսաստանի*, գանգատ թիվ 33468/03, 2012թ. հունվարի 10, պարբ. 34։

հետապնդման ենթարկվելու հնարավորությունն այս և այլ դրույթներում[6] արդարացված չէ։

26. Վերջապես 1.56-րդ ենթապարբերությունում «բնակարան» բառի սահմանումը բավարար չէ բնակարաններն ընդգրկելու համար, քանի որ դրանք կազմում են միայն «շենքի կամ շինության» մասը և ներառված չեն այս եզրին հետևող նկարագրության մեջ։ Այս թերությունը կարելի է վերացնել՝ սահմանման մեջ կոնկրետ վկայակոչելով բնակարանները կամ «շենք կամ շինություն» եզրին ավելացնելով արտահայտություն, ինչպես «կամ դրա մասը»։

27. *Ուստի վերոնշյալ պարբերություններում բարձրացված մտահոգություններին անհրաժեշտ է անդրադառնալ դրանցում առաջարկված ձևով։*

Հոդված 9. Դատավարական ակտի հատկանիշները և պարտադիրությունը

28. 2-րդ պարբերության նպատակն անհասկանալի է թվում այն իմաստով, որ պարբերությունը սահմանում է այն, ինչն արդյունավետորեն մի ենթադրություն (կանխավարկած) է, որ դատավարական ակտը «օրինական և հիմնավոր» կլինի, երբ «հակառակը» չի «հաստատվում պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դրա ստուգման արդյունքում»։ Այնուհանդերձ, 3-րդ և 4-րդ պարբերություններում նշվում են այն հանգամանքները, որոնք որոշում են, թե արդյոք դատավարական ակտը «օրինական և հիմնավոր» է, իսկ Օրենսգրքի նախագծում առկա է դատավարական ակտերի բողոքարկման ենթակա լինելու մասին դրույթ[7]։ Ապացուցման բեռն ընկնում է դատավարական ակտը բողոքարկման միջոցով վիճարկող ցանկացած անձի վրա, և 2-րդ պարբերության առաջարկի բովանդակությունն իրականում որևէ օգտակար բան չի ավելացնում այդ պահանջին։

29. *Ուստի տվյալ դրույթը չպետք է պահպանվի։*

Հոդված 12. Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները

30. 3-րդ և 4-րդ պարբերություններում փոխհատվող վկայակոչումն անհասկանալի է թվում։ Ուստի վերջին պարբերության մեջ ակնհայտ չի թվում, որ փոխհատվող վկայակոչում պետք է կատարվի ոչ թե 1.7-րդ, այլ 1.8-

[6] Տես ստորև՝ պարբերություններ 30-33։
[7] 49.1(16) և 50.1(16) հոդվածներում։

րդ ենթապարբերությանը՝ նկատի առնելով, որ 1.7-րդն ակնհայտորեն վերաբերում է «մահացածին»: Բացի այդ, 4-րդ պարբերությունը երկու անգամ վկայակոչում է 1.10-րդ ենթապարբերությունը, երկրորդ անգամը՝ 1.11-րդ ենթապարբերությանը փոխհատվող վկայակոչման փոխարեն:

31. *Ուստի անհրաժեշտ է ստուգել և հարկ եղած դեպքում փոփոխել փոխհատվող վկայակոչումը:*

32. Քրեական հետապնդումը դադարեցնելու հանգամանքների բացառումը 1(7)-րդ ենթապարբերության մեջ, մասնավորապես, երբ «անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական վարույթն անհրաժեշտ է շարունակել մահացածի իրավաչափ շահերի պաշտպանության համար», բավարար չափով չի լուծում մահացած անձանց քրեական վարույթի օբյեկտ լինելու հետ կապված՝ նախկինում մատնանշված խնդիրը, քանի որ Օրենսգրքի նախագծում չի կոնկրետացվում, թե որոնք են այդ «իրավաչափ շահերը», և բացի հոդված 44.2-ի՝ մահացած անձի մերձավոր ազգականին որպես նրա օրինական ներկայացուցիչ ճանաչող դրույթից, չի ճշգրտվում, թե ինչպես պետք է բավարար իրականացվեն նման վարույթները՝ իր պաշտպանության իրականացման առումով լավագույն դիրքում գտնվող անձի բացակայությամբ:

33. *Հետևաբար, այս դրույթով նախատեսված հնարավորությունը պահպանելու դեպքում անհրաժեշտ է ավելի կոնկրետ ճշգրտել «իրավաչափ շահեր» արտահայտության նշանակությունը և համապատասխան վարույթի անցկացման փաստացի ձևը:*

Հոդված 13. Քրեական վարույթի կարճման հիմքերը

34. Այս դրույթում առկա են 12-րդ հոդվածում սահմանված՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներից մի քանիսը միայն: Ներառվածները տեղին են, սակայն ակնհայտ չէ, որ պետք է տարբերություն լինի այս երկու դրույթների միջև հետապնդվող որևէ անձի նկատմամբ գործը կարճելու հիմք լինելու առումով: Թեև ենթադրվում է, որ 12-րդ հոդվածը պահանջում է, որ սկսված հետապնդումը պետք է դադարեցվի, սա, ըստ էության, կարող է տեղի չունենալ, ուստիև կարող է անհրաժեշտ լինել կարճման վերաբերյալ որոշում: Ավելի նպատակահարմար մոտեցում կարող է լինել 12-րդ և 13-րդ հոդվածների միավորումը, որպեսզի լինի քրեական վարույթի բացառման, դադարեցման կամ կարճման համար հիմքերի համապարփակ խումբ:

35. *Ուստի 12-րդ և 13-րդ հոդվածները պետք է համապատասխանաբար վերանայվեն։*

Հոդված 15. Վարույթի հանրայնությունը

36. Այս դրույթի վեց պարբերություններում առկա տարբեր գաղափարներն ինքնին անառարկելի են։ Սակայն դրանք ձևակերպված են բավականին ընդհանուր ձևով և, ըստ էության, իրապես չեն ուղղորդում, թե ինչպես պետք է հավասարակշռություն ապահովել հանրային և մասնավոր շահերի միջև։ Սա չի օգնի քննիչին կամ դատախազին որոշել այն մանրամասն տեղեկությունների ծավալը, որ նա կարող է տրամադրել լրատվամիջոցներին որևէ գործի վերաբերյալ։

37. Բացի այդ, պարզ չէ, թե ինչու է 3-րդ պարբերության մեջ ներառվել նշում դատավորի անկողմնակալության մասին։ Որպես հասկացություն՝ դա կարող է ավելի համապատասխանել հաջորդ դրույթին՝ օրենքի առջև հավասարության մասին։ Քանի որ այն կարող է վերաբերել վարույթի լրատվական լուսաբանման ազդեցությանը, ավելի օգտակար կլիներ այս հարցին անդրադառնալ առավել հստակ եզրերով։

38. *Ուստի ուշադրություն պետք է դարձվի սույն դրույթի վերաձևակերպմանը՝ առավել հստակ ուղղորդելու շարադրված սկզբունքների կիրառումը, կամ այն միացնել 28-րդ հոդվածի դրույթներին, որոնք նույնպես վերաբերում են դատական վարույթին։*

Հոդված 16. Բոլորի հավասարությունը օրենքի առջև

39. Եվրոպական կոնվենցիային լիովին համահունչ և դրա կողմից պահանջված է բացառել քրեական վարույթում ներգրավված անձանց նկատմամբ ցանկացած խտրական վերաբերմունք։ Սակայն 2-րդ պարբերության այն ձևակերպումը, թե Օրենսգրքի նախագծով սահմանված կարգը «միասնական է վարույթին ներգրավված բոլոր մասնակիցների համար», ճշգրիտ չէ, քանի որ դրանով դատավարական տարբեր կարողությունների լայն շարք է նախատեսվում՝ առանձին դերակատարների կոնկրետ դերից կախված։

40. *Ուստի այս դրույթը պետք է վերամշակվի՝ ներառելու խտրականության պարզ արգելում քրեական վարույթի ցանկացած մասնակցի նկատմամբ՝ անկախ նրանց կատարած դերից։*

41. Բացի այդ, թեև «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի և Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումները պարտադիր են քրեական վարույթն իրականացնող մարմնի համար» ամրագրումը, անշուշտ, տեղին է, այն իրականում օրենքի առջև հավասարության հայեցակարգի մաս չէ։

42. *4-րդ պարբերությունն ուստի պետք է առանձին զետեղվի 3-րդ Գլխի՝ քրեական վարույթի սկզբունքների շարադրանքում։*

Հոդված 18. Անձի ազատությունը և անձնական անձեռնմխելիությունը

43. 3-րդ պարբերության մեջ կալանքը՝ որպես հարկադիր միջոց չօգտագործելու արդյունավետ կանխավարկածը պատշաճ է։ Սակայն ձևակերպումն անհրաժեշտ է որոշ չափով վերանայել, քանի որ «պատշաճ վարքագիծ» հասկացությունը ճշգրիտ չէ և չի արտացոլում այն հիմքերը, որոնք Եվրոպական դատարանի կողմից սահմանվել են որպես Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված ազատության սահմանափակումներն արդարացնող հիմքեր՝ կապված քրեական վարույթի հետ, մասնավորապես՝ փախուստի վտանգը, վարույթին միջամտելը և նոր հանցագործություններ կատարելը, ինչպես նաև հանրային կարգի համար վտանգ ներկայացնելը։ Դրանցից որոշները կարելի է գտնել 116-րդ հոդվածում սահմանված հանգամանքների շարքում՝ որպես խափանման միջոցների կիրառման հիմնավորումներ, որոնք կարող էին ներառել ազատությունից զրկումը, սակայն այդ դրույթին որևէ հղում չի տրվել։

44. Ավելին, ենթադրություն կա, որ պատշաճ վարքագիծն անպայմանորեն պահանջում է հարկադրանքի միջոցների որևէ ձևի կիրառում, երբ ապացույցները, հնարավոր է, չեն վկայում, որ իրականում առկա է Եվրոպական դատարանի սահմանած վտանգներից որևէ մեկը։

45. *Հետևաբար, անհրաժեշտ է այս դրույթը վերամշակել այնպես, որպեսզի այն ավելի ճշգրտորեն արտացոլի Եվրոպական դատարանի կողմից պահանջվող մոտեցումը։*

46. 6-րդ պարբերության ձևակերպումը, առնվազն անգլերեն տեքստում, անհարկի բարդ է թվում այն գաղափարի արտահայտման առումով, որ ֆիզիկական հարկադրանքը արդարացված է միայն իրավաչափ

կարգադրության կատարման ապահովման անհրաժեշտության դեպքում և չպետք է լինի այդ նպատակով պահանջվող նվազագույն չափից ավելի։

47. *Ուստի ուշադրություն պետք է դարձվի, թե արդյոք հայերեն տեքստն ավելի հստակ է ձևակերպված, քան՝ անգլերեն թարգմանությունը։*

Հոդված 19. Իրավաբանական օգնության ապահովումը

48. 1-ին պարբերության ամրագրումը, որ «յուրաքանչյուրի» համար պետք է ապահովվի իրավաբանական օգնություն, անպատեհ է, քանի որ սույն դրույթով նախատեսված մտադրությունը, անկասկած, այդ օգնությունը, այլոց թվում՝ դատախազների և թարգմանիչների համար ապահովելը չէ։

49. Բացի այդ, քանի որ Օրենսգրքի նախագիծն անդրադառնում է ձերբակալված անձ հասկացությանը՝ ի լրումն մեղադրյալի, պետք է ամրագրվի, որ իրավաբանական օգնությունը նաև պետք է ապահովվի նման անձի համար։

50. *1-ին պարբերությունն ուստի պետք է վերամշակվի՝ իրավաբանական օգնության տրամադրում սահմանելու միայն այս դրույթի 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված անձանց, ինչպես նաև ձերբակալված անձանց համար։*

Հոդված 22. Պատշաճ ապացուցումը

51. 3-րդ պարբերության իմաստը պարզ չէ այն առումով, որ այն վերաբերում է մի հիմնավորման, որը բացառում է մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստացի հանգամանքի «վերաբերյալ ցանկացած հիմնավոր կասկած»։ Սա կարող է նշանակել, որ առկա է այնպիսի ապացույցներ բացահայտելու պարտականություն, որոնք կարող են արդարացնել մեղադրվող անձին այնքանով, որքանով դրանք մատնանշում են նրա մեղքը։ Սա կարող էր տեղին լինել, սակայն հստակ չէ, որ հենց այն է, ինչ նախատեսված է։

52. *Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել, որ սա է այս դրույթի նպատակը և համոզվել, որ հայերեն բնօրինակի տեքստում նման անորոշություն չկա։*

53. Անհրաժեշտ է նշել, որ 7-րդ պարբերությունում օգտագործված չափանիշը պոտենցիալ ավելի խիստ նշանակություն ունի, քան Եվրոպական դատարանի կողմից այժմ ձևակերպված չափանիշը, քանի որ այն պատրաստ է ընդունելու, որ դատապարտումը չի հանգեցնի Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման, եթե այն միայն կամ առավելապես

հիմնվել է այնպիսի անձի ցուցմունքի վրա, ով բացակայում է դատավարության ժամանակ, բայց երբ առկա են բավարար հակակշռող գործոններ արդարացիությունը երաշխավորելու համար[8]: Այնուհանդերձ, ավելի խիստ և ավելի պարզ պահանջին հավատարիմ մնալը նպատակահարմար կլիներ՝ նկատի ունենալով մնացած բոլոր փոփոխությունները, որոնք կիրառվելու են ըստ Օրենսգրքի նախագծի:

Հոդված 24. Վարույթի ողջամիտ ժամկետը

54. Թեև գործին բնորոշ հանգամանքների բացակայության պարագայում անհնար է ճշգրիտ նշել, թե որ ժամկետը կլինի «ողջամիտ», այս դրույթի ձևակերպումը կարող է խստացվել՝ ամրագրելով, որ դատավորները և դատախազները պարտականություն ունեն երաշխավորելու, որ ջանասիրաբար հետամուտ են քրեական վարույթի իրականացմանը, որում իրենք ներգրավված են:

55. *Ուստի այս դրույթին անհրաժեշտ է ավելացնել պատշաճ ջանասիրության պահանջը:*

Հոդված 28. Դատական վարույթի հրապարակայնությունը

56. Ինչպես արդեն նշվել է, այս և 15-րդ հոդվածի[9] դրույթների միջև կա համընկնում:

57. *Ուստի ցանկալի կլիներ հրապարակայնության խնդրին անդրադառնալ մեկ հոդվածով:*

58. 3-րդ պարբերության դրույթը դռնփակ դատական նիստի անցկացման վերաբերյալ, ըստ էության, անհամատեղելի չէ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի՝ լսումների ոչ հրապարակային լինելու պահանջի հետ: Սակայն թեև նման որոշումը կարող է թույլատրելի լինել, լրատվական կազմակերպությունների համար այն ամբողջովին կամ որոշակի մասով վիճարկելու հնարավորության ակնհայտ բացակայությունը կարող է ի հայտ բերել 13-րդ հոդվածով նախատեսված՝ արդյունավետ պաշտպանության միջոց ունենալու իրավունքի խախտում՝ կապված այն վիճելի պնդման հետ,

[8] *Շատշաշվիլին ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ], գանգատ թիվ 9154/10, 2015թ. դեկտեմբերի 15:
[9] Տես վերևում՝ պարբերություններ 36-38:

որ տվյալ գործում դա անարդարացիորեն միջամտում է 10-րդ հոդվածով նախատեսված՝ ազատ արտահայտվելու նրանց իրավունքին[10]:

59. *Ուստի անհրաժեշտ է պարզաբանել, որ լրատվական կազմակերպությունների կողմից առկա է նման բողոքարկման հնարավորություն կամ նման հնարավորություն ներկայացնել Օրենսգրքի նախագծում:*

Հոդված 29. Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը

60. Պարտադիր չէ, որ անհամատեղելի լինի Եվրոպական կոնվենցիայի հետ, երբ դատարանը խափանման միջոց է կիրառում այն մեղադրյալի նկատմամբ, ում վարքագիծը վտանգում է վարույթի ընթացքը[11] կամ այլ մասնակիցների նկատմամբ, ովքեր վնաս են հասցնում վարույթին[12] կամ ցանկացած այլ անձի, ով բացահայտում է որևէ նյութ, որը պետք է գաղտնի մնա[13]: Ուստին սույն դրույթը պետք է հասկացվի այդ համատեքստում, բայց կարևոր է, որ այն չօգտագործվի որդեգրելու լայն տեսակետ այն մասին, թե որ վարքագիծը պետք է համարվի արգելված՝ այդպիսով խոչընդոտելով իրեն արդյունավետորեն պաշտպանելու՝ մեղադրյալի կարողությանը:

Բաժին 2. Քրեական վարույթին ներգրավված մարմինները և անձինք

Հոդված 35. Վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը

61. 2-րդ պարբերության մեջ նշվում է, որ դատախազի պարտականությունների մեջ է մտնում «պետական շահերի պաշտպանության հայց» հարուցելը: Հնարավոր է, որ մտադրություն է եղել հղում կատարել 39.2(4)-րդ հոդվածում՝ հանուն պետական շահերի պաշտպանության դատախազի կողմից մեղադրյալի կամ նրա գործողությունների համար պատասխանատվություն կրող այլ անձանց դեմ հայցի հարուցումը

[10] Տես՝ *Քրուկը և Լրագրողների ազգային միությունն ընդդեմ Միացյալ Թագավորության* (վճիռ), գանգատ թիվ 11552/85, 1988թ. հուլիսի 15:

[11] Տես օրինակ՝ *Էնսլինը, Բաադերը և Ռասպեն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության* (վճիռ), գանգատ թիվ 7572/76, 1978թ. հուլիսի 8:

[12] Տես օրինակ՝ *Դալաան ընդդեմ Միացյալ Թագավորության*, գանգատ թիվ 38395/12, 2016թ. փետրվարի 11:

[13] Տես օրինակ՝ *Ֆուրուհոլմենն ընդդեմ Նորվեգիայի* (վճիռ), գանգատ թիվ 53349/08, 2010թ. Մարտի 18:

վկայակոչելուն, բայց այն հավասարապես կարող է վերաբերել վերահսկողական գործառույթի ինչ-որ ձևի, որը կապ չունի քրեական գործընթացի հետ։

62. *Հետևաբար, անհրաժեշտ է պարզաբանել, թե որն է այս պատասխանատվության ճշգրիտ շրջանակը։*

Հոդված 36. Վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները և Հոդված 37.Վերադաս դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում

63. Դատախազի համար անպատշաճ չէ հանձնարարություններ տալ իր ենթականերին կամ քննիչներին։ Սակայն ենթակա դատախազների և քննիչների անկախության երաշխավորումը, որը ճանաչվում է 35-րդ հոդվածով, կշահի, եթե այդ հանձնարարությունները հիմնավորված լինեն և ներկայացվեն գրավոր։

64. *Ուստի խիստ ցանկալի կլիներ, որ այս դրույթները վերանայվեին՝ պահանջելու, որ հանձնարարությունները լինեն հիմնավորված և ներկայացվեն գրավոր, եթե ենթակա դատախազը կամ քննիչը նման հայց են ներկայացնում։*

Հոդված 38. Հսկող դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում

65. 1(15)-րդ ենթապարբերությունում նշվում են «մեղադրական եզրակացություն, մեղադրական ակտ և եզրափակիչ ակտ» եզրերը, որոնք առկա են նաև հետագա դրույթներում։ Սակայն Օրենսգրքի նախագծում այս եզրերի վերաբերյալ որևէ սահմանում ներառված չէ։

66. *Ուստի պետք է նախատեսվեն այս եզրերի սահմանումները։*

Հոդված 43. Մեղադրյալի իրավունքները և պարտականությունները

67. Այս դրույթում սահմանված իրավունքներից որոշները, մասնավորապես՝ 1(4)-րդ և (5)-րդ ենթապարբերություններում, վերաբերում են ձերբակալված անձին, ում իրավունքները սահմանված են 110-րդ հոդվածում։ Ավելի հստակ կլիներ, եթե այդ իրավունքները սահմանվեին այս դրույթում։

68. *43-րդ և 110-րդ հոդվածները պետք է համապատասխանաբար փոփոխվեն։*

69. Սակայն 1(4)-րդ ենթապարբերությամբ նախատեսված՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում ձերբակալված անձի գտնվելու վայրի մասին տեղեկացման հնարավոր հապաղումը շատ դեպքերում անտեղի կլինի և կարող է նպաստել նրա նկատմամբ անպատշաճ վերաբերմունքին: Մեծամասամբ դեպքերում ձերբակալումից հետո ոչ ավելի, քան կարճատև ժամանակահատվածը կարող է օբյեկտիվորեն արդարացված լինել:

70. *Հետևաբար, նպատակահարմար կլիներ այս դրույթը փոփոխել այնպես, որ ծանուցման պահանջը կատարվի ձերբակալումից հետո «հնարավորինս արագ, սակայն ոչ ուշ, քան 12 ժամից»:*

Հոդված 44. Մեղադրյալի օրինական ներկայացուցիչը

71. 6(1)-րդ ենթապարբերության մեջ այն ամրագրումը, թե ներկայացուցիչն իրավունք ունի «իմանալ, թե ինչում է մեղադրվում մեղադրյալը», ավելորդ է թվում՝ նկատի ունենալով 5-րդ պարբերությամբ այն ամրագրումը, որ ներկայացուցիչն ունի մեղադրյալի բոլոր իրավունքները, քանի որ դա վերջինիս իրավունքներից մեկն է և չի դասվում «մեղադրյալի անձից անբաժանելի» իրավունքների բացառության ներքո:

72. *Ուստի ուշադրություն պետք է դարձվի այս դրույթի պահպանման անհրաժեշտությանը:*

73. 9-րդ պարբերության մեջ այն ամրագրումը, որ մեղադրյալի ներկայացուցիչը «կարող է հրավիրվել և հարցաքննվել որպես վկա», ինքնին առարկելի չէ: Սակայն դրա կիրառումն առանձին դեպքերում կարող է ոչ միայն վտանգել ներկայացուցչի անկախությունը՝ նրան ենթարկելով ոչ պատշաճ ճնշման ձևի[14], այլև կարող է նշանակել, որ նա կարող է ի վիճակի չլինել շարունակելու հանդես գալ որպես ներկայացուցիչ, քանի որ դա անհամատեղելի կլինի մասնագիտական էթիկայի հետ: Դա այդպես է, թեև համարվում է, որ որպես վկա պաշտպանի դերը պետք է ենթադրի, որ 49.2-րդ հոդվածով նրան արգելվում է բացահայտել տեղեկություններ, որոնք նրան հայտնի են դարձել պաշտպանություն իրականացնելու ընթացքում:

74. *Հետևաբար, անհրաժեշտ է ոչ միայն ապահովել, որ հրավիրելը և հարցաքննելը խիստ վերահսկվում է, և որ այս իրավասությունը կիրառվում է միայն այն դեպքում, երբ առկա է այդպես գործելու լավ պատճառաբանված*

[14] Տես օրինակ՝ *Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի*, գանգատ թիվ 11082/06, 2013թ. հուլիսի 25:

հիմք: Բացի այդ, անհրաժեշտ են արդյունավետ միջոցներ՝ երաշխավորելու, որ ցանկացած հարցաքննություն ոտնձգություն չի հանդիսանում փաստաբան-հաճախորդ խորհրդապահության (գաղտնապահության) նկատմամբ, և որ հնարավոր է փոխարինել փաստաբանին, ով որակազրկվում է որպես ներկայացուցիչ գործելու համար՝ առանց մեղադրյալի պաշտպանությանը վնաս հասցնելու:

Հոդված 45. Քրեական վարույթին պաշտպանի մասնակցության հիմքերը և պայմանները

75. Մեղադրյալի անունից պաշտպանի գործելը երաշխավորող միջոցները, ընդհանուր առմամբ, պատշաճ են: Այնուամենայնիվ, թեև 1-ին պարբերությունը նախատեսում է, որ փաստաբանը որպես մեղադրյալի պաշտպան կարող է գործել մեղադրյալի օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականի, ինչպես նաև այլ անձանց հրավերով, սակայն չի ամրագրվում, որ մեղադրյալը պետք է տեղեկացված լինի նման հրավերի մասին, որպեսզի համաձայնություն տա՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից փաստաբանի նշանակման փոխարեն, ինչը համահունչ չի լինի պաշտպանի ցանկացած իրազեկ ընտրության անհրաժեշտությանը[15]:

76. *Ուստի այս դրույթում անհրաժեշտ է նախատեսել, որ մեղադրյալը պետք է տեղեկացված լինի իր օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականի կամ այլ անձանց կողմից փաստաբանի ցանկացած հրավերի մասին, որպեսզի կարողանա Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից նշանակված անձի փոխարեն այդ անձին ընտրելու կամ չընտրելու որոշում կայացնել:*

77. Բացի այդ, թեև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից փաստաբանի նշանակումը շատ դեպքերում կարող է բավարար լինել, պետք է հրաժարվելու և նոր նշանակում պահանջելու հնարավորություն ընձեռվի, եթե տվյալ փաստաբանը չունի անհրաժեշտ իրավասություն կամ մեղադրյալը նրան չվստահելու լավ պատճառաբանված հիմք ունի նախկինում ձևավորված հարաբերությունների պատճառով[16]:

78. *Հետևաբար, այս դրույթում հարկ է ներառել այդպիսի հնարավորություն:*

---

[15] *Դվորսկին ընդդեմ Խորվաթիայի* [ՄՊ], գանգատ թիվ 25703/11, 2013թ. հոկտեմբերի 20:

[16] Տես՝ *Քրոյսանտն ընդդեմ Գերմանիայի*, գանգատ թիվ 13611/88, 1992թ. սեպտեմբերի 25, պարբ. 30:

Հոդված 47. Պաշտպանից հրաժարվելը

79. Պաշտպանից հրաժարումը սահմանափակող միջոցները, ընդհանուր առմամբ, պատշաճ են: Սակայն 4-րդ պարբերությունում այն հասկացությունը, որ անձը «ակնհայտ չարաշահում է պաշտպանից հրաժարվելու իր իրավունքը», հստակեցման կարիք ունի, քանի որ այն բացատրություն չի տրամադրում նման եզրահանգման հիմքի վերաբերյալ:

80. *Ուստի 4-րդ պարբերությունում պետք է ճշգրտվի ակնհայտ չարաշահման հասկացությունը:*

Հոդված 49. Պաշտպանի իրավունքները և պարտականությունները

81. Տեղին է, որ 1(2)-րդ ենթապարբերությամբ նախատեսվում է, որ մեղադրյալի հետ պաշտպանի տեսակցությունների թիվը և տևողությունը չպետք է ենթարկվեն «կամայական սահմանափակման»: Սակայն վերջին եզրը գործնականում չի բացատրում այն հիմքը, որով սահմանափակումները կարող են կիրառվել այդ տեսակցությունների նկատմամբ, կամ ինչպես կարող է դրանց կիրառումը կամայական գնահատվել:

82. *Հետևաբար, ավելի օգտակար կլիներ, եթե դրույթում նշվեր, որ տեսակցությունների թվի և տևողության սահմանափակումներ չկան՝ բացառությամբ նշված պատճառների, և որ այդ սահմանափակումների կիրառումը չպետք է ունենա մեղադրյալի պաշտպանությունը խոչընդոտող ազդեցություն:*

83. Նաև պատակահարմար է, որ պաշտպանը պետք է դատական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ստանա պատշաճ ծանուցում, սակայն 1(15)-րդ ենթապարբերությունում օգտագործվող «պատշաճ» եզրը չափազանց անորոշ է այս նպատակի համար[17]:

84. *Ուստի այս դրույթը պետք է փոփոխվի՝ պահանջելու, որ պաշտպանը ստանա ծանուցում, որը բավարար հստակ կլինի նրա համար տվյալ դատական նիստին մասնակցել կարողանալու համար:*

Հոդված 54. Տուժողի լիազոր ներկայացուցիչը

[17] Անհրաժեշտ է նշել, որ 55.1(8)-րդ հոդվածում նախատեսվում է գույքային պատասխանողի՝ դատական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին «պատշաճ ծանուցում» ստանալը, ինչը փոքր-ինչ ավելի նպատակահարմար է:

85. Ճիշտ է, որ լիազոր ներկայացուցիչը չպետք է կատարի տուժողի շահերին հակասող որևէ գործողություն: Սակայն սույն դրույթի 4-րդ պարբերությունում այս զուտ հայտարարությունը, որին հետևում է տուժողի հատուկ լիազորությունը պահանջող հարցերի ցանկ, տպավորություն է ստեղծում, որ կարող են լինել այլ անթույլատրելի հարցեր, որոնք կարող են մեկնաբանվել որպես տուժողի շահերին հակասող՝ չհստակեցնելով դրանք կամ չբացատրելով, թե ով է որոշելու՝ արդյոք տեղի ունեցել է այդ շահերի հակասություն կամ սպառնում է տեղի ունենալ: Այս դրույթը հակադրվում է 49.3-րդ և 56.5-րդ հոդվածների ձևակերպումների հետ, որոնցում նշված է, որ կան որոշակի գործողություններ, որոնք պաշտպանը կամ, համապատասխանաբար, գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցիչը չեն կարող անել՝ առանց հատուկ հանձնարարությունների:

86. *Նախընտրելի կլիներ այս դրույթը վերաձևակերպել 49.3-րդ և 56.5-րդ հոդվածների ոճով՝ թվարկելով տուժողի շահերին հակասող համարվող բոլոր գործողությունները:*

Հոդված 66. Վարույթին դատավորի մասնակցությունը բացառող հանգամանքները

87. Տեղին է, որ դատավորը, ում անկողմնակալությունը կարող է կասկածի տակ դրվել, չմասնակցի վարույթին: Սակայն 1-ին պարբերության ձևակերպումը կարելի է պարզեցնել, քանի որ 1.1-րդ ենթապարբերությունում այն ձևակերպմանը, որ «դատավորը կանխակալ վերաբերմունք ունի վարույթին ներգրավված որևէ անձի նկատմամբ», բավարար չափով անդրադարձ է կատարվում 1(5)-րդ ենթապարբերությունում, ուստի 1(1)-րդից մինչև (4)-րդ ենթապարբերությունները դուրս թողնելը կներառեն կոնկրետ դեպքերը, երբ անկողմնակալությունը կարող է կասկածի տակ դրվել:

88. *1(1)-րդ ենթապարբերությունը պետք է համապատասխանաբար փոփոխվի:*

89. Ճիշտ է, որ նախնական դատալսումներին մասնակցությունն անպայմանորեն չի նշանակում, որ առկա է դատավորի անաչառության մասին կասկածելու պատճառ: Սակայն 2-րդ պարբերության մեջ այն ձևակերպումը, որ դա չպետք է լինի «տվյալ վարույթին նրա հետագա մասնակցությունը բացառող հանգամանք», չափազանց անվերապահ է, քանի որ չի նախատեսում այն հնարավորությունը, որ դատավորը կարող է ստիպված եղած լինել եզրակացության հանգել մեղադրյալի մեղավորության մասին նախնական դատալսումների ընթացքում:

90. *Հետևաբար, 2-րդ պարբերությունը պետք է փոփոխվի՝ պարբերության երկրորդ նախադասության մեջ «մասնակցությունը» և «բացառող հանգամանք չէ» բառերի միջև ավելացնելով «ինքնաբերաբար» բառը։*

Հոդված 69. Վարույթին օրինական ներկայացուցչի մասնակցությունը բացառող հանգամանքները

91. (3)-րդ պարբերությունում այն հասկացությունը, որ օրինական ներկայացուցչի վարքագիծը «ակնհայտորեն վնասում է ներկայացվողի շահերին», հստակեցման կարիք ունի, քանի որ այն որևէ բացատրություն չի տրամադրում նման եզրահանգման հիմքի առումով։

92. *Ուստի 3-րդ պարբերությունում ակնհայտ չարաշահման հասկացությունը պետք է ճշգրտվի։*

Հոդված 85. Հատուկ պաշտպանության միջոցի դադարեցման հիմքերը և կարգը

93. Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսված պարտավորությունների հետ անհամատեղելի կլինի, եթե հատուկ պաշտպանության միջոցի կիրառումն ինքնաբերաբար դադարեցվի, երբ սուտ ցուցմունքներ են տրվել կամ չեն կատարվել 84.2-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները, սակայն դեռևս առկա է վտանգ անձի կյանքի կամ բարեկեցության համար[18]։ 1-ին պարբերությունը թույլ է տալիս այդ դադարեցումը, սակայն (թեև այն չի պահանջում դա) չկա որևէ պարտականություն՝ դիտարկելու, թե արդյոք համապատասխան վտանգը դեռևս առկա է նախքան պաշտպանության դադարեցումը։

94. *Այս դրույթն անհրաժեշտ է փոփոխել՝ երաշխավորելու, որ պաշտպանությունը չի դադարեցվում, քանի դեռ առկա են դրա տրամադրման համար հիմք ծառայած ռիսկերը։*

Բաժին 3. Ապացույցներ և ապացուցում

Հոդված 87. Ձերբակալվածի ցուցմունքը

[18] Տես՝ *Ռ Ռ-ն ընդդեմ Հունգարիայի*, գանգատ թիվ 19400/11, 2012թ. դեկտեմբերի 4 (դատավարական համաձայնություն կնքած անձի ընտանիքի անդամների պաշտպանության դադարեցման վերաբերյալ)։

95. Լիովին պարզ չէ, թե ինչու է անհրաժեշտ համարվում ձերբակալվածի և մեղադրյալի ցուցմունքների առանձին սահմանումը՝ հաշվի առնելով, որ այդ ցուցմունքը վերաբերում է միևնույն մարդուն: Բացի այդ, հարց է առաջանում, թե ինչու է այս դրույթում «ցուցմունք» համարվում միայն գրավոր դեպոնացումը («գրավոր տվյալները»), քանի որ դա, կարծես, սահմանափակում է նախքան անձին պաշտոնապես որպես մեղադրյալ ճանաչելը տրված ցուցմունքների ապացուցողական արժեքը: Այդպիսով այս դրույթը կարելի է հակադրել 88-րդ և 89-րդ հոդվածներին, որոնցում համարվում է, որ ցուցմունքը ներառում է թե՛ բանավոր և թե՛ գրավոր դեպոնացումն ինչպես մեղադրյալի, այնպես էլ տուժողի կողմից:

96. *Ուստի անհրաժեշտ է հստակեցնել այս դրույթի առարկան, ինչպես նաև դրա և այլ դրույթների միջև տարբերակումը ցուցմունքների ձևերի առնչությամբ:*

Հոդված 91. Փորձագետի եզրակացությունը,
Հոդված 92. Փորձագետի կարծիքը

97. Չնայած սկզբնական տպավորությանը՝ երկու դրույթներն էլ վերաբերում են այսպես կոչված՝ փորձագետ վկայի կարծիքին: Դրույթներում «եզրակացություն» և «կարծիք» տարբեր անունների կիրառումը կարող է տպավորություն ստեղծել, թե տարբերակում է կատարվում դատարանի պատվիրած և մասնավոր կողմի պատվիրած փորձագիտական կարծիքների միջև: Նման տարբերակումն արտասովոր է և կարող է ոչ միայն հանգեցնել շփոթության, այլև նսեմացնել փորձագետ վկաների՝ դատարանի կողմից չպատվիրված կարծիքներին վերապահված արժեքը:

98. *Եթե սա զուտ թարգմանության խնդիր չէ, կարծիքի երկու ձևերի միջև առկա տարբերակումը չպետք է պահպանվի, սակայն դրանք կարելի է միմյանցից տարբերակել՝ վկայակոչելով որպես «դատարանի պատվիրած փորձագիտական կարծիքներ» և «մասնավոր կողմի պատվիրած փորձագիտական կարծիքներ»:*

Հոդված 96. Արտավարութային փաստաթղթերը

99. 3-րդ պարբերությունը հնարավոր է դարձնում քրեական վարույթում ներկայացնել քրեական վարույթի շրջանակներից դուրս իրականացված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում դատարանի թույլտվությամբ ստացված տեսագրությունները, ձայնագրությունները և այլ օբյեկտիվ փաստաթղթերը, որոնք կարող են ճանաչվել որպես արտավարութային փաստաթուղթ և կցվել վարույթի նյութերին: Նման

նյութերը կներառեն ոչ միայն փաստաթղթեր, այլև պատկերների գրանցումներ և գաղտնալսված խոսակցություններ: Նույնիսկ եթե դրանց թույլատրելիությունը սահմանափակվում է ենթադրյալ հանցագործության կամ անձի հետաքննության ժամանակ ձեռքբերված նյութերով, և դրանց օգտագործումը, ինչպես նախատեսում է դրույթը, հնարավոր է դատարանի թույլտվությամբ, հետախուզության և քրեական հետաքննության միջև սահմանագծի աղավաղումն ի հայտ է բերում էական ռիսկեր ընթացակարգային երաշխիքների համար[19]: Որպես կանոն, հետախուզությունը չպետք է ընդունվի որպես ապացույց, քանի որ նման տարրերի ձեռքբերման եղանակները չեն տարածվում քրեական վարույթի շրջանակներում պահանջվող նույն երաշխիքների վրա:

100. *Ուստի անհրաժեշտ է փոփոխել այս դրույթը՝ պահանջելու հստակեցնել այդպիսի ապացուցողական նյութերի ձեռքբերման հանգամանքները և պայմանները, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա ամրագրելու, որ դրանք չպետք է թույլատրելի լինեն:*

101. Առարկան որպես փաստաթուղթ կամ իրեղեն ապացույց դասակարգելու (հնարավորություն, որը տրամադրվում է 4-րդ պարբերությամբ) կարևորությունը հասկանալի չէ: Սա կարևոր էր անցյալում, երբ փաստաթղթերի իսկության հետ կապված տարբեր կանոնները կամ պաշտոնական և մասնավոր փաստաթղթերի ապացուցողական տարբեր արժեքները մեծ դեր ունեին: Սակայն էլեկտրոնային փաստաթղթերի աստիճանաբար ավելի շատ օգտագործման և նշանակության պարագայում առարկաների և փաստաթղթերի միջև տարբերակումը դարձել է նվազ կարևոր: Ամեն դեպքում պարզ է, որ եթե առարկան չի համապատասխանում «փաստաթուղթ» կատեգորիային, ապա այն պետք է համարվի «իրեղեն ապացույց»:

102. *Ուստի այս դրույթի պահպանման անհրաժեշտություն չկա:*

Հոդված 97. Ապացույցների թույլատրելիությունը և դրանց օգտագործման սահմանափակումները

103. Բացառությամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների՝ հետախուզական ապացույցների օգտագործումը թույլատրվում է 10-րդ պարբերությամբ: Բացի այդ, թեև որոշ սահմանափակումներ նախատեսված են՝ կապված նրա հետ, թե քրեական վարույթից առաջ երբ պետք է ձեռք

[19] Սրան կարելի է հակադրել ապացույցների հավաքման պահանջները 103-րդ հոդվածում:

բերված լինեն այդ ապացույցները, այն չի անդրադառնում ընթացակարգային երաշխիքների վերաբերյալ արդեն իսկ նշված մտահոգություններին նման ապացույցներն օգտագործելիս։ Ամեն դեպքում այդ սահմանափակումները կիրառելի չեն բոլոր հանցագործությունների նկատմամբ։

104. *Ուստի անհրաժեշտ է փոփոխել այս դրույթը՝ պահանջելու հստակեցնել այդպիսի ապացուցողական նյութերի ձեռքբերման հանգամանքները և պայմանները, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա ամրագրելու, որ դրանք չպետք է թույլատրելի լինեն։*

Հոդված 98. Իրեղեն ապացույցների պահպանումը

105. Ապացույցների մասեր հանդիսացող առգրավված առարկաների պահպանման և դրանք պահելը չարդարացված, չափազանց վտանգավոր կամ ծախսատար լինելու դեպքում ոչնչացման հնարավորության վերաբերյալ տարբեր դրույթները կարելի է դիտարկել որպես խիստ դրական։ Սակայն չեն երաշխավորում, որ նախքան դրանց փոխանցումը կամ ոչնչացումը դրանց տերը, եթե նա հայտնի է և չի հանդիսանում վարույթի կողմ, պետք է տեղեկացվի այդ իրեղեն ապացույցների ճակատագրի մասին։ Անշուշտ, առարկաների վաճառք, որպես կանոն, չպետք է հրահանգվի, եթե ապացույցներ կան, որ դրանք օրինական տեր ունեն, և տիրոջ պահանջները հետագա քաղաքացիական հայցին վերագրելը նրա շահերի բավարար երաշխիք չի հանդիսանա։

106. *Ուստի անհրաժեշտ է փոփոխել այս դրույթը՝ վերոնշյալ մտահոգություններին անդրադառնալու նկատառումով։*

Հոդված 102. Ապացուցման ենթակա փաստական հանգամանքները

107. Թեև այլ եվրոպական օրենսգրքերը վկայակոչում են միայն առհասարակ «փաստերը», որևէ առարկություն լինել չի կարող սույն դրույթի ամրագրած մոտեցման առնչությամբ, որում նշվում է փաստի յուրաքանչյուր տեսակ, որը կարող է ապացուցվել քրեական վարույթում և նշվում են այլ փաստեր, որոնք կարող են անհրաժեշտ լինել։ Այդուհանդերձ, 1(9)-րդ ենթապարբերությունում՝ «այն հանգամանքները, որոնցով անձը հիմնավորում է վարույթի ընթացքում իր գույքային պահանջները» ձևակերպումը ճշգրիտ չի թվում, քանի որ «անձը» վնաս կրած կամ քաղաքացիական կողմն է (այսինքն՝ տուժողը)։

108. *Այս դրույթում պետք է օգտագործվի առավել ճշգրիտ եզրաբանություն։*

Հոդված 105. Ապացույցների գնահատումը

109. Այս դրույթը փորձում է որոշակի վերահսկողություն կիրառել ապացույցների վերաբերելիության, թույլատրելիության և հավաստիության նկատմամբ վարույթի յուրաքանչյուր փուլում՝ ներգրավված բոլոր ընթացակարգային դերակատարների (այսինքն՝ քննիչի, դատախազի և դատավորի) կողմից։ Այս մոտեցումը ողջունելի է, սակայն 3-րդ պարբերության ձևակերպումը՝ կապված ապացույցների գնահատման հետ, խնդրահարույց է թվում։ Նման գնահատում գործնականում կատարվում է միայն դատավորի կամ դատարանի առջև հանրային դատալսումների ընթացքում։ Նախորդող փուլերում ոստիկանությունը և դատախազները գնահատում են այդ ապացույցների նշանակությունը, երբ դրանք հավաքվում են քննությունը շարունակելու, կասկածյալների վերաբերյալ որոշումներ կայացնելու, այլ քննություններ սկսելու, տարբերակներ մշակելու, կամ վերջապես մեղադրական եզրակացություն կազմելու կամ չկազմելու համար։ Այս բոլոր գործողություններում պահանջվում է գնահատել հավաքված ապացույցների կարևորությունը և արժանահավատությունը։ Ուստի, չնայած 3-րդ պարբերության մեջ՝ որոշ ապացույցներին «մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն» տալու արգելքին, «քանի դեռ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դրանք չեն գնահատվել», ապացույցների նման կշռադատումից խուսափելը հնարավոր չի թվում։

110. *Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել այս պարբերության նպատակը և գուցե վերաձևակերպել այն։*

Հոդված 106. Փաստերի իրավական կանխավարկածը

111. 1(4)-րդ ենթապարբերության մեջ անհասկանալի է այն վերապահումը, որ եթե քրեական վարույթի ընթացքում հակառակը չի ապացուցվում, ապա ապացուցված է համարվում «փաստը, որը մեղադրյալին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ՝ որպես նրա բացառիկ իրազեկության հանգամանք»։ Մասնավորապես, ակնհայտ չէ, թե ինչ տեսակի տեղեկություն կարող էր համարվել որպես հայտնի մեղադրյալին՝ որպես նրա բացառիկ իրազեկության հանգամանք։

112. *Այս դրույթում պետք է օգտագործվի ավելի ճշգրիտ ձևակերպում։*

Հոդված 107. Որոշակի ապացույցներով հաստատվող հանգամանքները

113.2-րդ պարբերությամբ փորձագետ վկայի կարողության սահմանափակումը՝ իր գրավոր կարծիքը պարզաբանելու առումով, այն վերապահումով, որ ցուցմունքը չի կարող փոխարինել այդ կարծիքին, պատշաճ չէ, քանի որ այն բացառում է քննության ընթացքում նրա բարձրացրած տեսակետների կամ այլ փորձագիտական կարծիքների արդյունքների հիման վրա իր գրավոր գնահատման որևէ ասպեկտի մեջ փոփոխություն կատարելու հնարավորությունը:

114. *Հետևաբար, այս դրույթը չպետք է պահպանվի:*

Բաժին 4. Հարկադրանքի միջոցները

Հոդված 109. Ձերբակալումը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում

115.1-ին պարբերությունում ամրագրված՝ ձերբակալման հիմքերի հետ կապված որոշ շփոթմունք է առաջանում: Այն արդարացիորեն օգտագործում է «հիմնավոր կասկածի» չափանիշը, և դա իրավամբ կարելի է համարել, որ բխում է (1)-ին ենթապարբերության առաջին մասից՝ «բռնվել է ենթադրյալ հանցանքը կատարելիս...», (2)-րդ և (3)-րդ ենթապարբերություններից և (4)-րդ ենթապարբերության առաջին մասից (այսինքն՝ «առկա են հանցանքի կատարմանն անձի առնչությունը հաստատող այլ հիմքեր»): Սակայն հիմնավոր կասկած չի կարող ծագել «հանցանքը կատարելուց անմիջապես հետո» անձի բռնվելու հիմքով, քանի որ դա նրան ընդամենը առնչում է հանցագործության վայրի հետ, սակայն անպայմանորեն չի հանգեցնում նրա ներգրավվածությանը հանցագործության կատարման մեջ: Այդ ներգրավվածությունը կարող է ապահովվել «բացահայտ հետքերով», որոնց մասին նշվում է (3)-րդ ենթապարբերությունում: Հետևաբար, (1)-ին ենթապարբերությունում կարիք չկա պահպանել «հանցանքը կատարելուց անմիջապես հետո» վկայակոչումը:

116. Բացի այդ, (4)-րդ ենթապարբերության երկրորդ մասում «միաժամանակ նա դեպքի վայրից կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր կամ նրա ինքնությունը պարզված չէ» ձևակերպումը մատնանշում է ոչ թե հանցագործություն կատարելու հիմնավոր կասկած, այլ փախուստի վտանգի առկայության հիմքեր: Այդպիսի հիմքերի առկայությունը

կերաշխավորի, որ ձերբակալումը կամայական չէ, սակայն դրանք կիրառելի են (1)-(3)-րդ ենթապարբերությունների և (4)-րդ ենթապարբերության հանգամանքների համար, ուստիև պետք է նշվեն որպես առանձին պահանջ ձերբակալման համար բոլոր դեպքերում կամ լինեն գործոն, որը պետք է հաշվի առնվի որևէ մեկի ձերբակալման վերաբերյալ որոշում կայացնելիս։

117. *Ուստի 1-ին պարբերությունը պետք է համապատասխանաբար փոփոխվի։*

118. 9-րդ պարբերությունում այն վերապահումը, որ «սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով նախատեսված կարգը տարածվում է նաև մինչդատական վարույթում տնային կալանքի և վարչական հսկողության կիրառման նկատմամբ», կարծես, անիմաստ է, քանի որ նշված երկու միջոցներն էլ կիրառվում են դատարանի կողմից[20] և չպետք է կիրառվեն նախքան դատարանի վճիռը։

119. *Ուստի 9-րդ պարբերությունը պետք է հանվի։*

Հոդված 110. Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալված անձի իրավունքները, պարտականությունները, դրանց իրականացման պայմաններն ու երաշխիքները

120. 1-ին պարբերությամբ նախատեսված՝ հապաղման հնարավորությունը նախքան ձերբակալված անձի կողմից մեղադրյալի իրավունքների ձեռք բերելը, որը տևում է մինչև 6 ժամ, մեծամասամբ դեպքերում պատշաճ չի լինի, չնայած 2-րդ պարբերությամբ սահմանված նվազագույն իրավունքներին, և կարող է դյուրին դարձնել առանց փաստաբանի հարցաքննությունը կամ ոչ պատշաճ վերաբերմունքը։ Մեծամասամբ դեպքերում ձերբակալումից հետո միայն կարճատև ժամանակահատվածը կարող է օբյեկտիվորեն արդարացվել։

121. *Ուստի նպատակահարմար կլիներ այս դրույթը փոփոխել այնպես, որ ծանուցման պահանջը կատարվի ձերբակալումից հետո «հնարավորինս արագ, սակայն ոչ ուշ, քան 6 ժամից»։*

122. 3-րդ պարբերությամբ այն ամրագրումը, որ 2(3)-(5)-րդ ենթապարբերություններով նախատեսված իրավունքները, այսինքն՝ պահպանել լռություն, որևէ մեկին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին և

[20] 123-րդ և 124-րդ հոդվածների համաձայն։

հրավիրել փաստաբան, ծագում են հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահից միայն, պատշաճ չէ, քանի որ որևէ հիմք չկա կասեցնելու Եվրոպական կոնվենցիայով նախատեսված՝ լռություն պահպանելու իրավունքը, իսկ ինչ վերաբերում է մյուս իրավունքներին, ապա չի նշվում, թե որն է ձերբակալման և տվյալ շենք մուտք գործելու միջև առավելագույն ժամանակահատվածը՝ դատելու, թե արդյոք նման հետաձգումը տեղի կունենա առանց ձերբակալված անձի իրավունքների վնասի։

123. *Հետևաբար, 3-րդ պարբերությունը պետք է փոփոխվի, որպեսզի այն ընդհանրապես չվերաբերի 2(3)-րդ ենթապարբերությանը, իսկ ինչ վերաբերում է 2(4)-րդ և (5)-րդ ենթապարբերություններին, ապա ցանկացած հետաձգում ուժի մեջ մտնելու համար պետք է նշվի երկու ժամը չգերազանցող կարճ ժամանակահատված։*

124. 2(5)-րդ ենթապարբերությամբ նախատեսված՝ «փաստաբան հրավիրելու» իրավունքը որոշակի ճշգրտման կարիք ունի, քանի որ ձերբակալված անձը պետք է ոչ միայն կարողանա նշանակել փաստաբան, այլև հանդիպել նրան նախքան որևէ հարցաքննության տեղի ունենալը, եթե չկան դա հետաձգելու արդարացուցիչ պատճառներ[21]։ Այդպիսի իրավունք առկա է 43-րդ հոդվածում, սակայն ավելի հստակ կլիներ այստեղ նույնպես այն նշել։

125. *Այս դրույթը պետք է փոփոխվի՝ վերոնշյալ հնարավորությունը նախատեսելու նկատառումով։*

126. 4(1)-րդ պարբերությամբ նախատեսված՝ ձերբակալումն իրականացնող անձի, հետաքննության մարմնի և վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին ենթարկվելու պարտականությունը կիրառելի է միայն օրինական կարգադրությունների նկատմամբ։

127. *Ուստի անհրաժեշտ է հաստատել, որ որևէ պատասխանատվություն չի նախատեսվում անօրինական կարգադրություններ կատարելուց հրաժարվելու դեպքում և որ անօրինական կարգադրությունների կատարման նպատակով ուժի կիրառումն ինքնին կհանգեցնի քրեական պատասխանատվության։*

---

[21] Տես՝ *Իբրահիմը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], գանգատ թիվ 50541/08, 2016թ. սեպտեմբերի 13։

128. Հասկանալի չէ, թե ինչու են 6-րդ և 7-րդ պարբերությունները հնարավորություն նախատեսում 2(3)-րդ ենթապարբերությամբ սահմանված՝ լռություն պահպանելու իրավունքի իրականացումը մինչև առավելագույնը 12 ժամով հետաձգելու համար, եթե «առկա են հիմնավոր պատճառներ, որ այդ իրավունքի անհապաղ իրականացումը կարող է խոչընդոտել հանցագործության կանխմանը կամ խափանմանը կամ հանգեցնել ապացույցների ոչնչացման կամ վնասման»: Լռություն պահպանելու իրավունքը որևէ աղերս չունի այդ ռիսկի հետ և բոլոր դեպքերում չի հանդիսանում այնպիսի իրավունք, որը կարելի է հետաձգել՝ համաձայն Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի: Ավելի վաղ նախագծում վկայակոչվել է ձերբակալված անձի գտնվելու վայրի մասին տեղեկացման հետաձգումը, որն անպատշաճ չէր լինի նշված պատճառների համատեքստում:

129. *Եթե 6-7-րդ պարբերությունները վերաբերում են լռություն պահպանելու իրավունքին, դրանք պետք է հանվեն:*

130. Արդեն իսկ նշվել է, որ 43-րդ հոդվածի որոշ իրավունքներ ավելի նպատակահարմար կլիներ զետեղել այս դրույթում[22]:

131. *110-րդ հոդվածը համապատասխանաբար պետք է փոփոխվի:*

Հոդված 111. Ձերբակալումը ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար

132. *Անհրաժեշտ է հաստատել, որ այս դրույթի ներքո ձերբակալված անձն ունի 43-րդ հոդվածով նախատեսված՝ մեղադրյալի իրավունքները:*

Հոդված 113. Ձերբակալված օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի լրացուցիչ իրավունքները

133. Թեև հյուպատոսական և հարակից պաշտոնյաներին հասանելիության իրավունքն ի հայտ է գալիս միայն պայմանագրային պարտավորությունների համաձայն, ցավալի է, որ այս դրույթով նախատեսվում է նման հասանելիության հնարավորություն միայն այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետությունը կնքել է համապատասխան պայմանագիր այն պետության հետ, որի քաղաքացի կամ մշտական բնակիչ է ձերբակալված անձը: Այսպիսով, հաշվի չեն առնվում անդամ պետություններին՝ Նախարարների կոմիտեի՝ կալանքի տակ պահելու, կալանքի տակ պահելու

[22] Տես վերևում՝ պարբերություններ 67-68:

պայմանների և չարաշահումից պաշտպանված լինելու երաշխիքների տրամադրման վերաբերյալ Թիվ (2006)13 հանձնարարականի կանոններից 27-րդ կանոնը[23], որի համաձայն՝

> [1] Անձը, ով այլ երկրի քաղաքացի է և ով կալանքի տակ է վերցվում, պետք է իրավունք ունենա ծանուցելու իր երկրի հյուպատոսին այս հնարավորության մասին ողջամիտ ժամկետներում՝ նրանից խորհուրդ կամ աջակցություն ստանալու նպատակով։
> [2] Այս իրավունքը պետք է հնարավորության դեպքում նաև տրամադրվի այն անձանց, ովքեր ունեն թե՛ այն երկրի քաղաքացիությունը, որտեղ նրանց կալանքի տակ են վերցնում և թե՛ այլ երկրի քաղաքացիություն։

134. *Հետևաբար, նպատակահարմար կլիներ հանել այն պահանջը, որ հասանելիությունը կախված է պայմանագրային պարտավորությունից։*

Հոդված 114. Ձերբակալվածին ազատելը

135. Այն վերապահումը, որ ձերբակալված անձն ազատ արձակվելուց հետո «չի կարող կրկին ձերբակալվել միևնույն կասկածով», առնվազն անգլերեն տեքստում պատշաճ չէ ձևակերպված, նույնիսկ եթե նպատակը պատշաճ է։ Սա այն պատճառով, որ խնդիրն այն չէ, թե կասկածը նույնն է, այլ արդյո՞ք հիմք են ընդունվում կասկածի նույն հիմքերը։ Այսպիսով, անձը կարող է կասկածվել հանցագործություն կատարելու մեջ *x հիմքերով,* սակայն նա չպետք է ձերբակալվի այդ նույն հիմքերով ազատ արձակվելուց հետո, բայց կարող է ձերբակալվել *y հիմքերով*, թեև հանցագործությունը, որի մեջ կասկածվում է, մնում է նույնը[24]։

136. *Ուստի այս դրույթը պետք է համապատասխանաբար փոփոխվի։*

Հոդված 115. Խափանման միջոցների նպատակը և տեսակները

137. Այս դրույթի 2-րդ պարբերության մեջ նշվում է խափանման միջոցների՝ հնարավոր «անօրինական վարքագիծը» կանխելու նպատակը։ Սա, ինչպես 18-րդ հոդվածում «պատշաճ վարքագիծը», չափազանց լայն է որպես հասկացություն։ Ավելին, այս նպատակը վկայակոչելն ավելորդ է, քանի որ խափանման միջոցների կիրառման պատճառները սահմանված են 116-րդ հոդվածով։

---

[23] Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից՝ 2006թ. սեպտեմբերի 27-ին, Նախարարների տեղակալների 974-րդ հանդիպմանը։

[24] Հմմտ.՝ միևնույն մեղադրանքի հիմքով հետագա կալանքի հետ կապված առավել համապատասխան ձևակերպում կարելի է գտնել 121.1-րդ հոդվածում։

138. Բացի այդ, 1-ին պարբերության մեջ վկայակոչումը, թե ով կարող է կիրառել խափանման միջոցներ, նույնպես անտեղի է, քանի որ պատշաճ կերպով արտացոլված են այլ դրույթներում։

139. *Այս դրույթը պետք է վերաբերի միայն խափանման միջոցների տեսակների սահմանմանը, այսինքն՝ 3-րդ և 4-րդ պարբերությունների բովանդակությանը։*

Հոդված 116. Խափանման միջոցի կիրառման իրավաչափությունը

140. Խափանման միջոցների կիրառման երեք հիմքերից միայն առաջին երկուսը՝ փախուստը կանխելը և հանցանքի կատարումը կանխելը, ճանաչվել են Եվրոպական դատարանի կողմից՝ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ պարբերությանը համապատասխան։

141. Երկրորդ հիմքի դեպքում սա միայն մասամբ է այդպես, երբ այն վերաբերում է «հանցանքի կատարումը», և ոչ՝ նույն ծանրության հանցագործության կամ հանցագործությունների կատարումը կանխելուն, որոնցում անձն արդեն մեղադրվել է։ Գուցե այս ավելի սահմանափակող մոտեցմանը հնարավոր լինի հասնել 2(2)-րդ ենթապարբերության մեկնաբանությամբ, սակայն ավելի լավ կլիներ առավել բացահայտ սահմանափակել դրա շրջանակները։

142. 2(3)-րդ ենթապարբերությամբ սահմանված երրորդ հիմքը «մեղադրյալի կողմից իր վրա օրենքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելն» է, որը բավականին տարբեր է Եվրոպական դատարանի կողմից ճանաչված հիմքից, մասնավորապես՝ արդարադատության ընթացքը խոչընդոտելու պոտենցիալ ռիսկից։ Անկասկած, 2(3)-րդ ենթապարբերությամբ սահմանված հիմքը կարող էր ներառել օրինակ դեպք, երբ միջոցի նպատակն էր բացառել շփումը վկայի հետ։ Սակայն, կարծես, որևէ հիմք չկա, որը կարտացոլի արդարադատության իրականացմանը միջամտությունը որոշակի դատական կարգադրության բացակայության պարագայում, ինչը գործնականում կարող է խնդրահարույց լինել։

143. *Ուստի ուշադրություն պետք է դարձվի 2-րդ պարբերությամբ սահմանված հիմքերին արդարադատության իրականացմանը միջամտելու լավ հիմնավորված ռիսկի առկայության ներառման հնարավորությանը։*

144.3-րդ պարբերությունում ամրագրված է, որ մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելու հիմնավորում չի պահանջվում առաջին անգամ տնային կալանք կիրառելու դեպքում և այլ այլընտրանքային միջոցներ կիրառելու դեպքում: Սա բացարձակ չի համապատասխանում Եվրոպական դատարանի այն տեսակետին, որ պետք է առկա լինեն բավարար հիմքեր՝ համարելու, որ եղել է հետագա հանցանքներ կատարելու վտանգ, ինչը նշանակում է օրինակ, որ չի կարելի պարզապես հիմնվել մեղադրյալի անցյալին[25] և անհրաժեշտ է նկատի առնել նմանօրինակ հանցանքներ կատարելու նրա կարողությունը[26]: Հիմնավորման անհրաժեշտությունը պատշաճ կերպով ներկայացված է 116-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին:

145. *Հետևաբար, 3-րդ պարբերությունը պետք է հանել:*

Հոդված 117. Խափանման միջոց փոխելը կամ վերացնելը

146. 2-րդ պարբերության մեջ այն վերապահումը, թե ավելի խիստ խափանման միջոց պետք է կիրառվի, եթե «մեղադրյալը խախտում է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները», չափազանց բացարձակ մոտեցում է, քանի որ այն հնարավորություն չի ընձեռում նկատի առնել խախտման պատճառները, կամ որ ապագայում կկիրառվի պակաս խիստը: Արդյունքում այն չի համապատասխանում գործի առանձին հանգամանքների գնահատմանը, ինչը պահանջում է Եվրոպական դատարանը:

147. *Ուստի 2-րդ պարբերությունը պետք է վերանայվի՝ նախատեսելու, որ ավելի խիստ միջոց կարող է կիրառվել, եթե խախտվել է պակաս խիստ միջոցը, և դա անհրաժեշտ է թվում:*

Հոդված 118. Կալանքը և դրա իրավաչափությունը

148. Մեկ անգամ կրկին[27] 2-րդ պարբերության մեջ վկայակոչվում է «անօրինական վարքագիծը» կանխելու անորոշ և անօգուտ հասկացությունը, այլ ոչ թե խափանման միջոցներ կիրառելու հիմքերը:

149. *Այս դրույթը պետք է փոխարինել 116-րդ հոդվածով սահմանված հիմքերի վկայակոչմամբ:*

---

[25] *Մյուլերն ընդդեմ Ֆրանսիայի*, գանգատ թիվ 21802/93, 1997թ. մարտի 17:

[26] *Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի*, գանգատ թիվ 15217/07, 2009թ. մարտի 12:

[27] Տես վերևում՝ պարբ. 137:

Հոդված 123. Տնային կալանքը

150. 2(2)-րդ ենթապարբերությունում մեղադրյալին իր բնակության վայրում այլ անձանց հյուրընկալելն արգելելու իրավասությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով այնտեղ ապրող այլ անձանց՝ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը: Իսկապես, այս դրույթը ձևակերպված է ակնհայտ ենթադրությամբ, որ մեղադրյալը կարող է լիովին տնօրինել բնակության վայրը՝ սակայն չլինելով այդ վայրի տերը կամ վարձակալը:

151. *Սակայն դրույթի եզրույթներում որևէ փոփոխության կարիք չկա: 8-րդ հոդվածի խախտման ռիսկը կարելի է բացառել՝ հաշվի առնելով տվյալ բնակության վայրի բոլոր բնակիչների շահերը նման սահմանափակում կիրառելու դեպքում:*

Հոդված 125. Գրավը

152. 2-րդ պարբերության մեջ վճարման ենթակա գրավի նվազագույն չափի մատնանշումը բացառում է դատարանի կողմից մեղադրյալի կոնկրետ հանգամանքները հաշվի առնելը և դրանով չի համապատասխանում Եվրոպական դատարանի կողմից Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառմանը: Իսկապես, ցանկացած նվազագույն շեմի բացակայությունը չի բացառում գումարի սահմանումն այնպիսի մակարդակով, որը կերաշխավորի խափանման արդյունավետ միջոցը:

153. *Հետևաբար, 2-րդ պարբերության առաջին նախադասությունն անհրաժեշտ է հանել:*

Հոդված 126. Պաշտոնավարման կասեցումը

154. Այս դրույթից պարզ չէ, թե արդյոք հանրային ծառայող հանդիսացող մեղադրյալի պաշտոնավարման կասեցումն անպայմանորեն նշանակում է, որ տվյալ անձն այլևս չի վճարվելու, քանի դեռ կասեցումն ուժի մեջ է: Եկամտի կորուստը կարող է լուրջ հետևանքներ ունենալ տվյալ անձի և նրա ընտանիքի անդամների համար, մասնավորապես, եթե հնարավոր չէ ստանձնել աշխատանքի այլ տեսակ:

155. *Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել այս դրույթի ազդեցությունը և թե եկամտի ինչ այլընտրանքային աղբյուրներ հասանելի կլինեն մեղադրյալին, եթե նա չի վճարվելու կասեցման ժամանակահատվածում:*

Հոդված 131. Գույքի արգելադրման նպատակը և հիմքերը

156. Արգելադրման ապացուցողական տարբեր հիմքերի օգտագործման համար, կարծես, չկա որևէ ակնհայտ հիմնավորում 2-րդ պարբերության մեջ սահմանված չորս հիմքերի դեպքում՝ ի տարբերություն հինգերորդ հիմքում օգտագործվածի։

157. *Ուստի պետք է ներդաշնակեցվի արգելադրման հինգ հիմքերի առնչությամբ ընդունված ապացուցողական մոտեցումը։*

Հոդված 133. Գույքի արգելադրման կարգը

158. Նպատակահարմար կլիներ հստակեցնել, որ 7-րդ պարբերությամբ նախատեսված՝ գույքի գնահատումը փորձագետի կողմից վերջնական չէ, քանի որ հակառակ դեպքում անձը, ում գույքն արգելադրվել է, հիմք չի ունենա ներկայացնելու ապացույցներ, որ դա, ըստ էության, թերի է, ուստի նրան կմերժվի առանցքային հարցի շուրջ արդար դատաքննության հնարավորությունը։

159. *Ուստի 7-րդ պարբերությունը պետք է համապատասխանաբար փոփոխվի։*

Հոդված 137. Փորձաքննություն կատարելու համար բժշկական հաստատությունում տեղավորելը

160. 3-րդ պարբերությունը որևէ կապ չունի այս դրույթի վերնագրի կամ դրա առաջին երկու պարբերությունների հետ, քանի որ այն այդ տեղավորման կիրառումը ներկայացնում է ոչ թե որպես ապացուցողական, այլ անվտանգության միջոց։ Անհրաժեշտ է նշել, որ համանման պարբերություն առկա է 140-րդ հոդվածում, որտեղ այն տեղին կլիներ, քանի որ այս հոդվածը վերաբերում է բժշկական հսկողությանը՝ որպես անվտանգության միջոցի։

161. *Հետևաբար, 3-րդ պարբերությունը պետք է հանել։*

Հոդված 144. Դատական նիստի դահլիճից հեռացնելը

162. Եվրոպական դատարանն ընդունում է, որ կարող են լինել հանգամանքներ, որոնք արդարացնում են մեղադրյալին դատական նիստի դահլիճից հեռացնելը՝ նրա սանձարձակ վարքագծի պատճառով։ Սակայն սա, կարծես,

ավելի ընդունելի է, եթե մեղադրյալը կարող է շարունակել կապի մեջ մնալ իր փաստաբանների հետ և հեռակա կարգով հետևել դատավարությանը[28]։

163. *Ուստի նպատակահարմար կլիներ 4-րդ պարբերությունը փոփոխել այնպես, որպեսզի մեղադրյալի համար հնարավորություն ընձեռվի կապի մեջ մնալ իր փաստաբանների հետ և հեռակա կարգով հետևել դատավարությանը երրորդ կամ հերթական հեռացման դեպքում։*

Հոդված 147. Վարույթից հեռացնելը

164. Սույն դրույթով նախատեսված՝ վարույթին մասնակցող փաստաբանի, լիազոր ներկայացուցչի կամ օրինական ներկայացուցչի՝ վարույթից հեռացման հնարավորությունը պետք է կիրառվի մեծ զգուշությամբ՝ նկատի ունենալով այն հավանականությունը, որ դա կարող է խոչընդոտել պաշտպանությանը կամ վարույթի մասնավոր կողմերի մասնակցությանը։ Թեև դատական վերահսկողությունը պոտենցիալ կարևոր երաշխիք է նման հավանականությունը կանխելու համար, դա տեղի կունենա միայն այն դեպքում, երբ դատարան դիմումները լինեն արագ ընթացակարգով, իսկ վարույթները չշարունակվեն մինչև հարցի լուծումը, իսկ եթե հեռացման որոշումը ուժի մեջ թողնվի, ապա փոխարինող փաստաբանը, լիազոր ներկայացուցիչը կամ օրինական ներկայացուցիչը բավարար ժամանակ ունեցած լինեն նախապատրաստվելու համար։

165. *Ուստի սույն դրույթը պետք է համապատասխանաբար փոփոխվի։*

Բաժին 5. Այլ ընդհանուր դրույթներ

Հոդված 163. Գույքային հայցի լուծումը

166. 2-րդ պարբերությամբ նախատեսված՝ «արդարացման դատավճիռ կայացնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վարույթը կարճելու դեպքում» հայցը լրիվ կամ մասնակի բավարարելը մտահոգության առիթ է տալիս, քանի որ վտանգ կա, որ առանձին դեպքերում դա կհանգեցնի

[28] Տես օրինակ՝ *Էնսլին, Բաադերը և Ռասպեն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության* (վճիռ), գանգատ թիվ 7572/76, 1978թ. հուլիսի 8։

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ երաշխավորված՝ անմեղության կանխավարկածի խախտմանը[29]:

167. *Այս վտանգի կանխման համար դրույթում որևէ փոփոխություն կատարել անհրաժեշտ չէ, սակայն կարևոր է երաշխավորել, որ դատավորները լիովին տեղյակ լինեն դրան և գույքային հայցի բավարարման վերաբերյալ ցանկացած որոշում կայացնելիս և հիմնավորելիս ուշադիր լինելու անհրաժեշտությանը:*

Հոդված 164. Գույքային վնասի հատուցումը դատարանի նախաձեռնությամբ

168. Կա վտանգ, որ սույն դրույթով նախատեսված՝ դատավորի կողմից նախաձեռնության ցուցաբերումը կազդի նրա անկողմնակալ լինելու տպավորության վրա: Նախընտրելի կլինի, որ տուժողին, ով «զրկված է իր գույքային շահերը պաշտպանելու հնարավորությունից՝ մեղադրյալից կախվածություն ունենալու, անգործունակ կամ սահմանափակ գործունակ լինելու կամ այլ պատճառով», տրամադրվի իրավական ներկայացուցիչ հանրային ծախսերի հաշվին, որպեսզի այնպիսի տպավորություն չստեղծվի, թե դատավորը գործում է որևէ կոնկրետ կողմի անունից:

169. *Այս դրույթը պետք է համապատասխանաբար փոփոխվի:*

Բաժին 6. Մինչդատական վարույթը

Հոդված 173. Քրեական վարույթ նախաձեռնելու պարտականությունը

170. Չնայած վերնագրին՝ այս դրույթը կարգավորում է թե՛ այն դեպքերը, երբ պետք է նախաձեռնվի քրեական հետաքննություն, և թե՛ այն դեպքերը, երբ այն չպետք է նախաձեռնվի: Մասնավորապես՝ 6-րդ պարբերությամբ արգելվում է քննել հանցանքի մասին այն տեղեկությունը, որը ստացվել է անհայտ կամ չբացահայտված աղբյուրից: Մինչդեռ մեծամասամբ երկրներում նախնական քննություն կարող է իրականացվել անանուն աղբյուրից տեղեկություններ ստանալու դեպքում, որոնք, անհայտ լինելով հանդերձ, դրսևորում են որոշակի արժանահավատություն: 6-րդ պարբերությամբ նախատեսված սահմանափակման շրջանակը հասկանալի

[29] Տես օրինակ՝ *Ջիրինգն ընդդեմ Նիդեռլանդների*, գանգատ թիվ 30810/03, 2007թ. մարտի 1, *Վուլախը և այլոք ընդդեմ Ռուսաստանի*, գանգատ թիվ 33468/03, 2012թ. հունվարի 10 և *Թեոդորն ընդդեմ Ռումինիայի*, գանգատ թիվ 46878/06, 2013թ. հունիսի 4:

չէ, քանի որ այն նաև նախատեսում է չբացահայտված աղբյուրից հանցագործության վերաբերյալ ստացված հաղորդման ստուգումը դատախազի կամ քննիչի նախաձեռնությամբ՝ Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։

171. *Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել այդ սահմանափակման շրջանակը։*

172. 4-րդ պարբերությունն ընդունում է, որ զանգվածային լրատվամիջոցներում հրապարակված որոշակի տեղեկություններ կարող են հանցագործության մասին հաղորդման (*notitia criminis)* հիմք հանդիսանալ։ Սա արտացոլում է ընդհանուր մոտեցումը Եվրոպայում, քանի որ հանցագործության մասին հաղորդումների բոլոր աղբյուրների արժանահավատությունը պետք է քննվի քննիչների կամ դատախազների կողմից և սկզբունքորեն օրենքով սահմանափակված չէ։ Սակայն կասկածելի է, թե արդյոք լրատվամիջոցներին պետք է տրվի «հանցագործության մասին հաղորդում տվող անձի» կարգավիճակ և այս կարգավիճակին համապատասխան իրավունքներ։ Անշուշտ զանգվածային լրատվամիջոցներում հրապարակված տեղեկատվությունը հաղորդման գործողություն չէ և արդյունքում այն չունի նույն կարգավիճակը, ինչ հանցագործության մասին հաղորդում ներկայացրած այլ անձինք։

173. *Ուստի «հաղորդում ներկայացրած անձի» կարգավիճակ չպետք է շնորհվի լրատվամիջոցներին, որոնք հրապարակում են քննության նախաձեռնման համար հիմք հանդիսացող տեղեկություններ։*

Հոդված 174. Ֆիզիկական անձի անմիջական հաղորդումը

174. Երկրների մեծ մասում հանցագործության մասին հաղորդելը քաղաքացիական պարտականություն է, և հակառակը՝ կեղծ հաղորդումը կարող է առաջացնել քրեական պատասխանատվություն։ Այդուհանդերձ, 3-րդ պարբերության մեջ քրեական պատասխանատվություն ենթադրող հանցագործության մասին հաղորդում տվող ֆիզիկական անձին «սուտ մատնության» համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելը պատշաճ չէ, քանի որ հանցագործության մասին հաղորդելը համազոր չէ «մեղադրանքի»։

175. *Հետևաբար, այս դրույթը պետք է շտկվի։*

Հոդված 178. Քրեական վարույթ նախաձեռնելու կարգը

176. Որոշ աստիճանի համընկնում կա այս դրույթի առաջին երկու պարբերությունների և 173-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերությունների միջև՝ կապված քրեական վարույթ նախաձեռնելու պարտականության հետ, ինչը կարող է գործնականում հանգեցնել շփոթության։

177. *Հետևաբար, ցանկալի կլիներ, որ այս դրույթները համախմբվեին և զետեղվեին մեկ հոդվածում, նախընտրելի է 173-րդ հոդվածում։*

Հոդված 179. Վարույթի ընթացքը այն նախաձեռնելուց հետո

178. 5-րդ պարբերությամբ ամրագրումը, որ նախաքննության ընթացքում այլ ենթադրյալ հանցանք կատարելու փաստի հայտնաբերման յուրաքանչյուր դեպքում նոր քրեական վարույթ է նախաձեռնվում, սկզբունքորեն ճիշտ է։

179. *Այնուհանդերձ, ի շահ հետաքննության արդյունավետության՝ այս դրույթի կիրառումը չպետք է բացառի երկու հանցագործության համատեղ քննությունը, եթե դրանց միջև կապ կա։*

Հոդված 181. Քննչական ենթակայությունը

180. Այս դրույթը սահմանում է տարբեր իրավասու մարմինների ցանկեր, որոնք իրականացնում են քննչական փուլը հանրային դատախազի վերահսկողության ներքո։ Ներգրավված մարմինների բազմազանությունը և դրանց համապատասխան իրավասության ներքո հանցագործությունների շրջանակների փոխհատումը կարող են ստեղծել շփոթություն և իրավասությունների հակասություններ, ինչը չի բխում արդյունավետ իրավապահության շահերից։

181. *Ուստի ուշադրություն պետք է դարձվի ներգրավված քննչական մարմինների թվի պարզեցմանը։*

182. Բացի այդ, որոշ դեպքերում պարզ չէ կոնկրետ մարմնի ինքնությունը, օրինակ՝ 5-րդ պարբերության մեջ վկայակոչված «քննչական մարմնի քննիչները»։

183. *Նման անհստակությունները կբացառվեն, եթե ներառվեն հղումներ համապատասխան օրենսդրական դրույթին, որով ստեղծվել է համապատասխան քննչական մարմինը։*

184. Գլխավոր դատախազին վերապահված լիազորությունը՝ վերահանձնարարելու հանցագործությունների քննությունը, որոնցում կարող են ներգրավված լինել պետական պաշտոնյաներ, շատ լայն է, քանի որ դրա չափանիշը «անհրաժեշտության դեպքում» հասկացությունն է: Այլ իրավակարգերում նման լիազորության շնորհումը մտահոգող խնդիր է եղել, քանի որ այն հանգեցրել է վստահության կորստի՝ պայմանավորված այն հանգամանքով, որ պետական պաշտոնյաների կողմից կատարված՝ կոռուպցիայի հետ առնչվող հանցագործություններն արդյունավետ չեն քննվել:

185. *Հետևաբար, ավելի կոնկրետ չափանիշներ են անհրաժեշտ՝ կարգավորելու քննության իրականացման պատասխանատվության վերահանձնարարման ցանկացած դեպք:*

Հոդված 188. Հետաքննություն կատարելու հիմքը, սկիզբն ու ավարտը

186. 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն՝ գաղտնի քննչական գործողությունները կարող են կատարվել բացառապես քննիչի գրավոր հանձնարարությունների հիման վրա, սակայն օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարող են կատարվել քննիչի գրավոր հանձնարարությամբ կամ հետաքննության մարմնի նախաձեռնությամբ: Մոտեցումների միջև այս տարբերության պատճառը հասկանալի չէ:

187. *Ուստի ցանկալի կլիներ հստակեցնել մոտեցումների միջև տարբերության հիմնավորումը:*

Հոդված 189. Հանրային քրեական հետապնդում հարուցելը

188. 6-րդ պարբերության վերապահումը, որ դատախազն «իրավունք չունի քննիչին հանձնարարել ներկայացնելու անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշակի բովանդակությամբ միջնորդություն», որոշ երաշխիքներ է ապահովում քննիչի անկախության համար՝ որոշելու, թե արդյոք մեղադրել որոշակի հետաքննվող անձի, թե՝ ոչ: Սակայն այս հոդվածի բովանդակության մեջ անտեսվում է 38.1(5)-րդ հոդվածով նախատեսված՝ դատախազի իրավասությունը, ինչպես նաև 190-րդ հոդվածում ներառված հարցերի ասպեկտը՝ մեղադրել որևէ անձի սեփական նախաձեռնությամբ: Այս իրավասությանը որևէ հղում կատարելու բացթողումը սույն դրույթում կարող է շփոթությունների և թյուրըմբռնումների տեղիք տալ:

189. *Ուստի սույն դրույթը պետք է վերանայվի՝ նման հնարավորությանն անդրադառնալու նպատակով։*

Հոդված 190. Մեղադրանք ներկայացնելը

190. 2-րդ պարբերությամբ քննիչի համար նախատեսվում է դատախազի կողմից մեղադրանքի ներկայացման հետ համաձայն չլինելու հնարավորություն՝ վերադաս դատախազին առարկություն ներկայացնելու միջոցով։ Այս առարկության որոշման որևէ ժամկետ նշված չէ, և անհրաժեշտ է հստակեցնել, թե արդյոք կան ընդհանուր կանոններ, որոնք կարգավորում են այս բացը։ Բացի այդ, հասկանալի չէ, թե այդ դեպքում որն է լինելու անձի նկատմամբ մեղադրանք հարուցելուն առարկող քննիչի դերը։

191. *Ուստի վերոնշյալ կետերի պարզաբանման կարիք կա։*

Հոդված 193. Հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու հիմքերը

192. Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու հիմքերից մեկի ձևակերպումը, մասնավորապես, որ «մեղադրյալը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու պատճառով չի կարող մասնակցել վարույթին», կարելի է բարելավել, քանի որ սահմաններից դուրս գտնվելու փաստն անպայմանորեն չի նշանակում, որ մեղադրյալը «չի կարող մասնակցել»։ Նա կարող է պատրաստակամ լինել այդ անելու, սակայն միայն իր պաշտպանի միջոցով։

193. *Հետևաբար, գուցե ավելի նպատակահարմար կլիներ արձանագրել, որ կասեցումը հնարավոր է, երբ մեղադրյալը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս և չի ցանկանում մասնակցել խնդրո առարկա վարույթին։*

194. 4-րդ պարբերությունում քրեական հետապնդման ժամկետի կասեցման առավելագույն տևողության և քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի լրանալու միջև կապը տեղին է, սակայն չի անդրադառնում այն հարցին, թե արդյոք նշված կասեցումն ունի այս ժամկետն ընդհատող ազդեցություն։

195. *Ուստի ուշադրություն պետք է դարձվի, թե արդյոք առկա են վաղեմության ժամկետի ընդհատումը կարգավորող համապատասխան գործող դրույթներ նման դեպքերում։*

Հոդված 200. Մեղադրական եզրակացություն կազմելուց առաջ քրեական գործին ծանոթանալու կարգը

196. Քրեական գործը կողմերին մատչելի դարձնելը խիստ կարևոր է համարժեք պաշտպանություն նախապատրաստելու համար, և դա բավարար կլինի միայն այն դեպքում, եթե առկա է նյութերը պատճենելու հնարավորություն և բավարար ժամանակ է տրամադրված դրանք ուսումնասիրելու համար: Այս երկու հարցերին էլ սույն դրույթում անդրադարձ կատարվել է:

197. Սակայն ինչ վերաբերում է պատճենմանը, որը կարող է թանկ արժենալ, որևէ հստակեցում չկա ծախսերի հետ կապված կամ թե ով է հոգալու դրանք:

198. *Հետևաբար, նպատակահարմար կլիներ երաշխավորել, որ պատճենման ծախսերը խոչընդոտ չեն հանդիսանում մեղադրյալի պաշտպանության նախապատրաստման համար: Ավելին, պաշտպաններին պետք է թույլ տրվի մուտք ունենալ սեղյակ, որը հարմար է քրեական գործն ուսումնասիրելու և դրա բովանդակությանը ծանոթանալու համար: Սակայն հարկ է նաև նշել, որ կողմերին քրեական գործը պարունակող էլեկտրոնային ֆայլի տրամադրումը կկանխի պատճենման անհրաժեշտությունը, և այս ձևը կարգավորման առումով կլինի ավելի դյուրին և նվազ ծախսատար:*

199. Ինչ վերաբերում է նյութերի ուսումնասիրման համար թույլատրված ժամկետին, ապա 6-րդ պարբերությունում նշվում է քննիչի կողմից այդ նպատակով «որոշակի» ժամկետի սահմանումը, ինչը որևէ երաշխիք չի տրամադրում դրա համապատասխանության կամ դրա մեկնաբանության վերաբերյալ ցուցումների առումով:

200. *Ուստի անհրաժեշտ է 6-րդ պարբերության մեջ նշել, որ թույլատրված ժամանակը պետք է հաշվի առնի քրեական գործի նյութերի ծավալը և բարդությունը:*

Բաժին 7. Ապացուցողական գործողությունները

Հոդված 209. Քննչական գործողությունների կատարման հիմքերը

201. Այս դրույթի վերնագիրը լիովին ճշգրիտ չէ, քանի որ միայն 1-ին պարբերությունն է վերաբերում քննչական գործողություն նախաձեռնելու հիմքերին, մինչդեռ 2-րդ պարբերության մեջ թվարկվում են այն

գործողությունները, որոնք կարող են իրականացվել քննիչի կողմից առանց դատարանի կարգադրագրի։

202. *Ուստի նպատակահարմար կլիներ այս դրույթն առավել ճշգրիտ վերնագրել։*

203. Թեև դեպքի վայր (այսինքն՝ հանցագործության վայր) հանդիսացող բնակարանում սկզբնական զննումն առանց դատարանի կարգադրագրի, ինչպես նախատեսված է 2(1)-րդ ենթապարբերությամբ, կարող է համատեղելի լինել Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի հետ, որևէ հրատապություն չի նշվում, որը կարդարացնի 2(2)-(4)-րդ ենթապարբերություններում թվարկված լիազորությունների անհրաժեշտությունը, որոնք թույլ են տալիս քննիչին արտաշիրիմում, խուզարկություն կամ արգելադրում կատարել առանց նախապես նման կարգադրագիր ձեռք բերելու։

204. *Հետևաբար, նպատակահարմար կլիներ սահմանափակել առանց նախապես դատական կարգադրագիր ստանալու՝ 2(2)-(4)-րդ ենթապարբերություններում թվարկված լիազորություններն իրականացնելու հնարավորությունը պարզապես այնպիսի իրավիճակներով, եթե առկա է հիմնավորված վախ, որ ապացույցներն այլապես կարող են ոչնչացվել, վնասվել կամ այլ կերպ վտանգվել։ Այնքանով, որքանով անհրաժեշտ է, սույն բաժնում այս լիազորություններին առնչվող դրույթները, այսինքն՝ 234-40-րդ հոդվածները նույնպես պետք է համապատասխանաբար վերանայվեն։*

205. Այդուհանդերձ, նույնիսկ նման հրատապության դեպքերում համակարգիչը կամ սմարթֆոնը, որն արգելադրվել է նման հրատապության հիմքով, պետք է խուզարկվի դատական կարգադրագիր ստանալուց հետո։

206. *Հետևաբար, այս պահանջը պետք է հստակ նախատեսվի սույն դրույթում, ինչպես նաև խուզարկություն կատարելու մասին 236-րդ հոդվածում։*

Հոդված 210. Քննչական գործողության մասնակիցները

207. 5-րդ պարբերությամբ նախատեսվում է, որ երկու «ընթերակա» պետք է մասնակցեն որոշակի քննչական, մասնավորապես՝ ցուցմունքը տեղում ստուգելու, զննման, արտաշիրիմման, քննման, փորձարարության, ճանաչման, խուզարկության և առգրավման գործողություններում։ Ընթերականերն այսպես կոչված՝ հայցված վկաներ են, ովքեր կամավոր

մասնակցում են քննչական գործողություններին, բայցև վճարվում են[30]: Եվրոպական մայրցամաքային քրեական դատավարության օրենսգրքերում նրանց ներգրավվման մասին դրույթն այլևս հաճախ չի հանդիպում, և փոխարինվել է ձեռնարկված բոլոր գործողությունների պարտադիր ձայնագրմամբ: Այդուհանդերձ, նրանց ներգրավումը քննչական գործողություններին կարող է բավարար երաշխիք լինել այն դեպքերում, երբ մեղադրյալը պաշտպան չունի: Սակայն առավել գոհացուցիչ երաշխիք կլինի քննչական գործողությունների ձայնագրումը պարտադիր դարձնելը բոլոր դեպքերում, այլ ոչ միայն այն դեպքում, երբ ընթերականեր չկան, ինչպես նախատեսվում է 7-րդ պարբերությամբ:

208. *Ուստի սույն դրույթը պետք է համապատասխանաբար փոփոխվի:*

Հոդված 212. Անչափահասի կամ անգործունակի մասնակցությամբ կատարվող քննչական գործողության առանձնահատկությունները

209. Սույն դրույթով նախատեսված՝ անչափահասների մասնակցությամբ քննչական գործողություններին հոգեբանի ներգրավումն անհարկի սահմանափակված է թվում: Անչափահասին պաշտպանելու նպատակով, հատկապես եթե նա տուժողն է, հոգեբանը պետք է բավարար ազատություն ունենա՝ որոշելու անչափահասի հարցաքննության ենթարկվելու ձևը, ինչպես նաև մատնացույց անելու, թե որ հարցերը պատշաճ չեն լինի:

210. *Ուստի նպատակահարմար կլիներ սույն դրույթը համապատասխանաբար վերանայել:*

211. Գուցե դա թյուրիմացության արդյունք է, սակայն 3-րդ պարբերությունը նախատեսում է սուտ ցուցմունք չտալու պարտականությունը բացատրելը անչափահասին, բայց ոչ անգործունակին: Թվում է՝ անգործունակին այլ կերպ վերաբերվելու որևէ պատճառ չկա, քանի որ չպետք է ենթադրել, որ նրանք ցուցմունք տալիս ի վիճակի չեն հասկանալ ճշմարտացի պատասխանելու պարտականության շրջանակները և նշանակությունը:

212. Ուստի 3-րդ պարբերությունը պետք է փոփոխվի՝ ներառելու պահանջ, որ վերոնշյալ բացատրությունը նաև տրվի անգործունակ անձանց:

Հոդված 218. Վկայի հարցաքննությունը

[30] Ըստ 62-րդ հոդվածի:

213. Թեկուզև, ընդհանուր առմամբ, այս դրույթը բավարար է, այն կարելի է բարելավել՝ նշելով, որ եթե որևէ կասկած կա հենց վարույթի սկզբից, որ ենթադրյալ վկան, հնարավոր է, ինչ-որ ձևով ներգրավված է եղել տվյալ հանցագործության կատարմանը, պահանջ դրվի նրան տեղեկացնելու փաստաբան կանչելու և լռություն պահպանելու իրավունքներին, եթե պատասխանները կարող են հանգեցնել ինքնամեղսագրման: Ամեն դեպքում պետք է նշվի, որ հարցաքննությունը պետք է կասեցվի մինչև փաստաբանի օգնություն ստանալը, երբ վկան նման պահանջ է ներկայացնում՝ ելնելով այն հարցերի բնույթից, ըստ որոնց նա կարող է համարվել հնարավոր կասկածյալ:

214. *Ուստի դրույթը պետք է համապատասխանաբար փոփոխվի:*

Հոդված 221. Մեղադրյալի հարցաքննությունը

215. 4-րդ պարբերությամբ նախատեսվում է, որ եթե մեղադրյալը ցուցմունք տալու ցանկություն է հայտնում, «քննիչը նրան տեղեկացնում է ճիշտ ցուցմունք տալու պարտականության և նախազգուշացնում սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին: Այդ փաստը հավաստվում է մեղադրյալի ստորագրությամբ»: Եվրոպական կոնվենցիայի տեսանկյունից որևէ առարկություն չկա, երբ սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվություն է կիրառվում այն մեղադրյալի նկատմամբ, ով ցանկություն է հայտնում ցուցմունք տալ:

216. Սակայն սա այն մոտեցումը չէ, որին հետևում են եվրոպական մայրցամաքային իրավական համակարգերի մեծ մասում, որտեղ ավելի տարածված է պաշտպանության լայն ընկալումը՝ խուսափելու այն ռիսկից, որ մեղադրյալի սուտ ցուցմունքի քրեականացումը կարող է անդրադառնալ ինքնամեղսագրման արգելքի վրա:

217. Սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության գոյությունն այս համատեքստում նույնպես խնդրահարույց է այն առումով, որ վտանգ կա, որ սուտ ցուցմունք տալու համար մեղադրյալի հետագա քրեական հետապնդման համար կպահանջվի երկրորդ քրեական դատավարությունը՝ վերանայելու այն հանցագործության հետ կապված մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, որը եղել է առաջին դատի առարկան: Նման ընթացակարգը կարող է չարահաշվել և հանգեցնել Թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածով նախատեսված՝ կրկին չդատվելու և չպատժվելու իրավունքի խախտմանը:

218. *Ուստի լրացուցիչ ուշադրություն պետք է դարձվի, թե արդյոք մեղադրյալի նկատմամբ պատասխանատվության սահմանումը սուտ ցուցմունք տալու համար, ըստ էության, անհրաժեշտ կամ պատշաճ է Հայաստանի քրեական արդարադատության համակարգի համար։*

Հոդված 226. Զննումը

219. 6-րդ պարբերությունը դուրս է գալիս զննման այն շրջանակներից, ինչպես այդ եզրը նկարագրված է 1-ին պարբերությունում, այսինքն՝ «…վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու, ենթադրյալ հանցագործության հետքերը ... հայտնաբերելու նպատակով ... տեսողական ուսումնասիրություն», նրանով, որ նախատեսում է համակարգչային ծրագրերի, համացանցային կայքերի, թվայնացված տվյալների համակարգչային եղանակով կրկնօրինակում և թղթային պատճենների պատրաստում։ Նման գործողությունն ավելի պատշաճ է բնութագրել որպես փաստաթղթեր վերցնելը՝ համաձայն 233-րդ հոդվածի, կամ խուզարկություն և առգրավում՝ ըստ 234-րդ, 236-րդ և 239-րդ հոդվածների։ Բացի այդ, խնդրո առարկա նյութի փաստացի զննումը պետք է տեղի ունենա միայն համապատասխան դատական թույլտվության ստացումից հետո։

220. *Հետևաբար, անհրաժեշտ է պատշաճորեն բնորոշել 6-րդ պարբերությամբ առաջարկվող իրավասության այս ասպեկտը և երաշխավորել, որ ըստ այդմ՝ համապատասխան դատական թույլտվություն պահանջվի վերցված նյութերի զննման համար։*

221. 7-րդ պարբերության երկրորդ նախադասության նշանակությունը, որը թույլ է տալիս «օրենսդրությամբ շրջանառությունից հանված կամ ապօրինի շրջանառության մեջ գտնվող օբյեկտները՝ անկախ տվյալ վարույթին դրանց առնչությունից» վերցնելը, անհրաժեշտ է հստակեցնել, քանի որ այն, կարծես, թույլ է տալիս վերցնել այնպիսի գույք, որը չի պահանջվում քրեական վարույթի համար, ինչը հակասում է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ սեփականության անարգել տնօրինման իրավունքին։

222. *Անհրաժեշտ է հստակեցնել 7-րդ պարբերության այս մասի նպատակը և շրջանակը։*

Հոդված 228. Փորձարարությունը

223. Եթե այսպիսի քննչական միջոցը համարվում է անհրաժեշտ, այն պետք է իրականացվի միայն համապատասխան մասնագիտական գիտելիքներ և հարմարություններ ունեցող անձանց կողմից՝ տվյալ փորձարարությունն իրականացնելու և դրա արդյունքները քրեական հետաքննության համար գնահատելու և դատավարության ընթացքում ապացույցներ տրամադրելու նպատակով: Սակայն նման պահանջ սույն դրույթում նշված չէ:

224. *Հետևաբար, այս դրույթում անհրաժեշտ է նման պահանջ ներկայացնել:*

Հոդված 230. Անձի ճանաչումը

225. Այս գործողության համար առաջարկվող կանոնակարգը, ընդհանուր առմամբ, պատշաճ է, սակայն որևէ դրույթ նախատեսված չէ առ այն, որ ճանաչում կատարող անձինք տեսանելի չլինեն այն մարդկանց կողմից, ում ճանաչումը նրանք իրականացնում են, և որ այդ գործընթացին ներկա գտնվի պաշտպանը: Եվրոպական քրեական հետաքննությունների ընթացքում հիմնականում գործելակերպը հետևյալն է. ճանաչում կատարող անձին երաշխավորվում է տեսանելի չլինելու պաշտպանություն, որպեսզի նա կաշկանդված չզգա և կասկածյալի ավելի ճշգրիտ ճանաչում կատարի: Ճանաչման գործընթացի ժամանակ պաշտպանի ներկա գտնվելու պահանջը պատշաճ կլինի, քանի որ նա այդ դեպքում կհավաստիանա, որ իրավական պահանջները կատարվել են, ինչը շահավետ կլինի, եթե ճանաչումը նախատեսված է օգտագործել որպես ապացույց հետագա դատավարության ժամանակ:

226. *Հետևաբար, նպատակահարմար կլիներ փոփոխել այս դրույթը՝ վերոնշյալ մտահոգություններին անդրադառնալու նկատառումով:*

Հոդված 232. Տեղեկատվության պահանջը

227. Սույն դրույթով նախատեսված բացառությունը, կապված քննիչի կողմից պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու պարտականության հետ, շատ նեղ է: Անկասկած, օրենքով պաշտպանվող գաղտնիքների պաշտպանությունը կարող է տեղին լինել, սակայն մինչ դրույթը պետք է ընդհանրապես կիրառվի այլ պաշտոնական տեղեկությունների նկատմամբ, այն չպետք է նախատեսի պարտականություն որևէ մեկի համար՝ բացահայտելու անձնական տեղեկություններ իր կամ որևէ այլ անձի մասին առանց նախնական դատական թույլտվության, քանի որ դա կհանգեցնի Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված՝ անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտման: Բացի այդ,

տեղեկատվության պահանջը չպետք է պարտադրի խնդրո առարկա պաշտոնյային ինքնամեղսագրել իրեն՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված արգելքին հակառակ։

228. *Ուստի այս դրույթն անհրաժեշտ է վերանայել՝ հաշվի առնելով նշված մտահոգությունները։*

Հոդված 235. Խուզարկությանը մասնակցող անձինք

229. Ենթադրաբար այս դրույթի նպատակն է լրացնել խուզարկության ընթացքում երկու ընթերակաների ներկայության մասին 210.5-րդ հոդվածի պահանջը։ Սակայն սա կարող է անտեսվել, քանի որ այդ մասին հատուկ նշում չկա սույն դրույթում։

230. *Հետևաբար, նպատակահարմար կլիներ սույն դրույթում հղում կատարել Օրենսգրքի նախագծի ավելի վաղ դրույթին։*

Հոդված 236. Խուզարկություն կատարելու կարգը

231. Չնայած այս դրույթի վերնագրին՝ 5-րդ պարբերությունը վերաբերում է նաև խուզարկության ընթացքում գտնված առարկաների առգրավմանը։ Թեև այս առումով այն, ընդհանուր առմամբ, տեղին է, որևէ նշում չկա համաչափության սկզբունքի վերաբերյալ, մասնավորապես, որ միայն հանցագործության հետ ենթադրաբար կապ ունեցող տարրերը պետք է առգրավվեն։

232. *Ուստի 5-րդ պարբերությունում պետք է ներառվի այսպիսի վերապահում։*

Հոդված 237. Անձնական խուզարկությունը և
Հոդված 238. Խուզարկության արձանագրությունը

233. Այս դրույթում չի նշվում, թե արդյոք խուզարկության ենթարկվող անձից կարող է պահանջվել մերկանալ, այն հանգամանքները, որոնցում դա կարող է տեղի ունենալ, մարմնի խոռոչների զննման հնարավորությունը և պահանջը, որ խուզարկությունը, որպես կանոն, չպետք է իրականացվի հակառակ սեռի անձանց ներկայությամբ։ Այս հարցերին անհրաժեշտ է անդրադառնալ՝ երաշխավորելու, որ խուզարկությունը չի նվաստացնում կամ ստորացնում տվյալ անձին՝ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված արգելքին համապատասխան։

234. *Ուստի այս դրույթները պետք է վերանայվեն՝ լրացուցիչ պահանջ ներկայացնելով, որ խուզարկությունները, որոնց ժամանակ պահանջվում է անձի մերկացում, պետք է հիմնված լինեն կոնկրետ հիմքերի վրա՝ կապված արգելված առարկա թաքցնելու հետ, և որ դա չպետք է տեղի ունենա հանրային վայրում, եթե նշված առարկան գենք չէ: Բացի այդ, պետք է նախատեսվի, որ մարմնի խոռոչների զննման ընթացքում պահպանվեն հիգիենայի կանոնները, և այն չհանգեցնի տվյալ անձի լիովին մերկացմանը: Եվ վերջապես, պետք է լինի պահանջ, որ խուզարկությունները, որպես կանոն, պետք է իրականացվեն նույն սեռի անձի կողմից և պետք է տեղի ունենան միայն այն անձանց ներկայությամբ, ովքեր օրենքով պարտավոր են ներկա գտնվել:*

Հոդված 243. Գաղտնի քննչական գործողությունների իրավաչափության երաշխիքները

235. 1-ին պարբերությունում արգելքը՝ չօգտագործելու ցանկացած ապացույց, որը ձեռք է բերվել գաղտնի քննչական գործողության կատարման ընթացքում, որը չի իրականացվել դատարանի կարգադրագրով, բացառությամբ բարեխղճորեն կատարված գործողությունների, գուցե ավելի ընդգրկուն է, քան որոշ եվրոպական համակարգերում, սակայն անհամատեղելի չէ Եվրոպական կոնվենցիայի հետ: Սակայն այն մատնշումը, որ կարգադրագրի շրջանակներից դուրս հավաքված նյութերը պետք է ոչնչացվեն, հաշվի չի առնում դրանց հետ կապված ցանկացած հնարավոր սեփականության իրավունք: Միևնույն ժամանակ, եթե սա խնդիր չէ, չի մատնանշվում, թե ինչպես կամ երբ է կատարվում ոչնչացումը և ով է պատասխանատու դրա վերահսկման համար[31]: Բացի այդ, հստակ չէ, թե ում վրա է դրված ապացուցման բեռը, որ առանց կարգադրագրի գործող գործակալը «բարեխղճորեն» է կատարել իր գործողությունները, կամ թե ինչպիսի հանգամանքներում է դա որոշվում:

236. *Ուստի 1-ին պարբերությունն անհրաժեշտ է վերանայել՝ հաշվի առնելով նշված մտահոգությունները:*

237. Բացի այդ, թեև 7-րդ պարբերությունում իրավամբ նախատեսվում է պաշտպանություն որոշակի գաղտնի հաղորդակցությունների համար, բավարար ցուցումներ չկան, թե ինչպես դա պետք է կատարվի գործնականում: Այդպիսի ցուցումները հատկապես կարևոր են՝ նկատի

[31] Հմմտ.՝ ոչնչացման մասին կարգավորումները 249.5-րդ հոդվածում՝ հետաքննության մարմնի կողմից տվյալները չվերցնելու վերաբերյալ:

ունենալով, որ պարբերության մեջ հատուկ նշվում է այդպիսի հաղորդակցությունների վերահսկման արդյունքում ձեռքբերված տեղեկությունների «անհապաղ ոչնչացման» մասին, ինչն ընդգծում է, որ ակնկալվում է, որ առաջարկվող պաշտպանությունն արդյունավետ չի լինի։ Բացի այդ, «ձեռնադրված հոգևորական-խոստովանահայր» վկայակոչումը, նկատի ունենալով կրոնների բազմազան բնույթը, կարող է անբավարար լինել՝ ներառելու կրոնական առաջնորդների հետ բոլոր այդօրինակ հաղորդակցությունները։

238. *Ուստի 7-րդ պարբերությունն անհրաժեշտ է վերանայել՝ հաշվի առնելով նշված մտահոգությունները։*

Հոդված 245. Գաղտնի քննչական գործողության արձանագրությունը

239. 5-րդ պարբերությունից պարզ չէ, թե արդյոք գաղտնի քննչական գործողության արձանագրությունը, բացի այն կատարելու հանձնարարություն տված քննիչից որևէ այլ անձի փոխանցելու արգելքը նշանակում է, որ դատախազին այն հասանելի չի լինի, ինչը տարօրինակ կլիներ։

240. *Ուստի անհրաժեշտ է հստակեցնել, թե արդյոք սա իսկապես արգելքի հետևանք է, և արդյոք դա միտումնավոր է, թե՝ ոչ։*

Հոդված 251. Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը

241. Պատշաճ է պահանջել, որ այս հետաքննական միջոցը հանձնարարվի միայն այն դեպքում, երբ առկա է կաշառքի իրավախախտման վերաբերյալ բավարար կասկած։ Սակայն հստակեցումը, թե այս հետաքննական միջոցը պետք է հիմնված լինի «կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարության հիման վրա», բավարար չէ այդ նպատակի համար, քանի որ հայտարարության գրավոր լինելու փաստը չի արտացոլում դրանում նշվածի արժանահավատությունը։

242. *Ուստի սույն դրույթը պետք է վերանայվի՝ պահանջելու, որ նշված հայտարարությունը արժանահավատ լինի։*

243. Բացի այդ, հարկ է նշել, որ կաշառակերությունը միայն մեկն է այն իրավիճակներից, երբ գաղտնի քննչական գործողությունները կարող են հանգեցնել հանցագործներին ծուղակ գցելուն, ինչը կենթադրեր անարդար դատաքննություն՝ համաձայն Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին

պարբերության։ Օրենսգրքի նախագիծը, ընդհանուր առմամբ, չի վերաբերում ծուղակ գցելուն, և պարզ չէ, թե արդյոք սա կհանգեցնի մի իրավիճակի, երբ այս ձևով ձեռք բերված որևէ ապացույց կհամարվի անթույլատրելի։

244. *Ուստի անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ չափով են թույլատրելի, եթե ընդհանրապես թույլատրելի են, ծուղակ գցելու այլ ձևերը։*

Հոդված 258. Լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն

245. Կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննության նախաձեռնումը միևնույն կամ մեկ այլ փորձագետի կողմից կարող է պատշաճ լինել։ Սակայն անպատշաճ կլինի, եթե նպատակն այդ փորձաքննության արդյունքները որոշակի առանձին նպատակին համապատասխանացնելն է։ Այդպիսի վտանգից խուսափելու համար կարևոր է, որ իրականացված փորձաքննության բոլոր եզրակացությունները կցվեն քրեական գործին և այդպիսով մատչելի լինեն բոլոր կողմերին։ Սակայն սույն դրույթից պարզ չէ՝ արդյոք, ըստ էության, դա պահանջվում է, թե՝ ոչ։

246. *Ուստի սույն դրույթը պետք է վերանայվի՝ պահանջելու, որ բոլոր փորձագիտական եզրակացությունները կցվեն քրեական գործին։*

Բաժին 8. Դատական վարույթների ընդհանուր պայմանները

Հոդված 272. Մեղադրյալի մասնակցությունը դատական նիստին և նրա չներկայանալու հետևանքները

247. Թեև պահանջը, որ մեղադրյալը պետք է ներկա լինի իր դատավարությանը, կարող է համատեղելի լինել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ և լավագույն ճանապարհն է նրա պաշտպանության իրավունքը երաշխավորելու համար, Եվրոպական դատարանը ճանաչում է, որ ներկա գտնվելու իրավունքից կարելի է հրաժարվել, դեռ ավելին՝ բացառություններ թույլ տալով։ Այդուհանդերձ, մեղադրյալի բացակայությամբ դատավարությունը կարող է ծառայել արդյունավետության շահերին, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է նվազ ծանր հանցագործության կամ երբ մեղադրյալը մտադրված փախուստի է դիմում, քանի դեռ առկա են պատշաճ երաշխիքներ խնդրո առարկա վարույթի արդարացիության ապահովման համար։ Օրենսգրքի նախագիծը, կարծես, չի ճանաչում, որ

մեղադրյալի մասնակցության բացարձակ պահանջի պնդումը կարող է պատշաճ չլինել։

248. *Ուստի ուշադրություն պետք է դարձվի՝ մեղմացնելու պահանջն այնպես, որպեսզի այն համապատասխանի Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին։*

249. Ինչպես նախկինում նշվել է[32], պատշաճ կլիներ, որ դատական նիստի դահլիճից հեռացված մեղադրյալը կարողանար հետևել դատավարությանը տեսահողումով կամ պատուհանից՝ աուդիո հարմարությունների միջոցով, և նա ոչ միայն պետք է իրավաբանորեն ներկայացված լինի, այլև պետք է կարողանա հաղորդակցվել իր պաշտպանի հետ։

250. *Ուստի սույն դրույթը պետք է փոփոխվի՝ վերոնշյալ հնարավորությունները նախատեսելու նկատառումով։*

Հոդված 274. Տուժողի, գույքային պատասխանողի, նրանց ներկայացուցիչների, մեղադրյալի օրինական ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստին և նրանց չներկայանալու հետևանքները

251. Սույն դրույթը նախատեսում է դատական նիստին մասնակցելու վերոնշյալ անձանց ընդհանուր պարտականությունը։ Դատարանը կարող է նրանց թույլ տալ չմասնակցել առանձին նիստերի, ինչպես նաև հնարավոր է, որ նրանց նկատմամբ չմասնակցելու համար կիրառվեն պատժամիջոցներ։ Սա պոտենցիալ ծանրաբեռնող պահանջ է, երբ համապատասխան անձանց մասնակցությունը կարող է, ըստ էության, անհրաժեշտ չլինել կոնկրետ նիստերի ընթացքում։ Ավելի պատշաճ կլիներ, եթե դատարանը մատնանշեր, թե որ նիստերին է մասնակցությունը պահանջվում՝ հաշվի առնելով դրանց մասնակցելու հետ կապված անհաղթահարելի դժվարությունները (ինչպես օրինակ՝ նշանակված բժշկական վիրահատությունը)։

252. *Ուստի սույն դրույթի ձևակերպումը պետք է համապատասխանաբար վերանայվի։*

Հոդված 276. Դատաքննության սահմանները

253. Այս դրույթը սահմանում է մեղադրական մոդելի որոշակի տարրեր, մասնավորապես, որ փաստերը չեն կարող փոփոխվել կամ լրացվել դատարանի կողմից, և մեղադրողը, որպես կանոն, չի կարող փոփոխել

[32] Տես վերևում՝ պարբերություններ 162-163։

գանգատում ներառված փաստական հիմքերը։ Սակայն 2-րդ պարբերությունը թույլ է տալիս փոփոխել մեղադրանքը, եթե գլխավոր մեղադրողն իր ապացույցներն է ներկայացրել դատարանում, որ «հիմնական դատալսումների ընթացքում հետազոտված ապացույցներով հաստատվել են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չէին և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում և որոնք ինքնին կամ այլ փաստական հանգամանքների հետ միասին անհրաժեշտ են դարձնում մեղադրյալին նոր մեղադրանք ներկայացնելը»։ Այն պահանջը, որ փաստերը «չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում», հավանաբար, չափազանց խիստ է, և գուցե ավելի պատշաճ կլիներ նշել, որ այդ փաստերը հայտնի չեն եղել։ Միևնույն ժամանակ մեղադրանքը չպետք է հնարավոր լինի փոփոխել այնպիսի փաստերի արդյունքում, որոնք արդեն հայտնի են եղել։

254. *Ուստի ուշադրություն պետք է դարձվի 2-րդ պարբերությունը համապատասխանաբար փոփոխելուն։*

255. 4-րդ պարբերությամբ հարգվում է մեղադրական սկզբունքը՝ պահանջելով կողմերի հետ քննարկում անցկացնել նախքան մեղադրյալին վերագրվող արարքին տրված իրավական գնահատականը փոփոխելը։ Սակայն չի անդրադառնում այն հնարավորությանը, որ այս նոր որակավորումը դատապարտման վճռի դեպքում կարող է հանգեցնել ավելի խիստ պատժի սահմանման։ Նման հանգամանքներում կստացվի, որ առանց գլխավոր մեղադրողի կողմից այս նոր որակավորումն ընդունելու՝ դատարանը, հակադրվելով մեղադրական սկզբունքի պահանջներին, ի պաշտոնե մեղադրական տարրեր է ներդնում։

256. *Հետևաբար, 4-րդ պարբերությունը պետք է փոփոխվի՝ այս մտահոգությանն անդրադառնալու նկատառումով։*

Հոդված 279. Դատական նիստի արձանագրումը

257. Դատական նիստի արձանագրման մեխանիզմները պատշաճ են, այդուհանդերձ, դատական նիստի արձանագրման համակարգչային ձայնագրման տարբերակի մատչելի չլինելու հնարավորությունն արտացոլում է ֆինանսական սահմանափակումների իրողությունը։ Մինչև համակարգչային ձայնագրման համատարած կիրառումը մատչելի դարձնելը, գուցե պատշաճ կլինի երաշխավորել, որ այն կիրառվում է առանձնակի բարդ կամ ծանր հանցագործություններ ներառող դեպքերում։

258. *Ուստի պետք է նկատի առնվի՝ բաշխելու առանձնակի բարդ կամ ծանր հանցագործություններ ներառող դեպքերը համակարգչային ձայնագրման հնարավորություն ունեցող դատարաններին։*

Հոդված 282 Դատավճիռը կատարման հանձնելը

259. 2-րդ պարբերությունը հեռանում է այն գաղափարից, որ արդարացում նշանակում է, որ առկա են ապացույցներ, որ արդարացված անձը չի կատարել հանցանքը։ Դա միշտ չէ, որ այդպես է. երբ մեղքը ապացուցող բավարար ապացույցներ չկան կամ առկա են քրեական պատասխանատվությունից ազատման հիմքեր։ Ուստի հանցագործության մեղավորին գտնելու համար արդարացման դատավճիռն ինքնաբերաբար չի հանգեցնում մեկ այլ հետաքննության նախաձեռնման։

260. *Ուստի այս դրույթը պետք է վերամշակվի՝ առավել ճշգրիտ լինելու համար։*

Բաժին 9.Մինչդատական վարույթի դատական երաշխիքները

Հոդված 288. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդության վերաբերյալ որոշումը

261. Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի նպատակներից ելնելով՝ կարիք չկա, որ խափանման միջոց կիրառելու մասին որոշումը, ինչպես նախատեսվում է 2(5)-րդ ենթապարբերությամբ, պայմանավորված լինի նախնական իրավաչափ ձերբակալմամբ, քանի դեռ առկա է բավարար կասկած, որ տվյալ անձը կատարել է հանցագործություն, և խնդրո առարկա միջոցը կիրառելու անհրաժեշտություն։ Այդուհանդերձ, այս պայմանականությունը որոշվում է 3-րդ պարբերությունում նշված այն հանգամանքների անհրաժեշտությամբ, որոնք ներառում են 5-րդ հոդվածի պահանջների լուրջ խախտումներ, և հետամտված մոտեցումը կարող է դիտարկվել որպես նման անպատշաճ վարվելակերպին վերջ դնելու փորձ և առարկելի չէ։

Հոդված 289. Գալանքը վերացնելու կամ գալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու միջնորդությունը և դրա քննությունը

262. 1-ին պարբերությամբ նախատեսվում է, որ մեղադրյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչն իրավունք ունեն միջնորդություն

ներկայացնել դատարան կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին՝ «կալանքի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան յոթ օր առաջ»: Թեև դատարանները պետք է կարողանան պատշաճ կերպով կազմակերպել իրենց վարույթները, սույն դրույթը հաշվի չի առնում այն հնարավոր դժվարությունները, որոնք կարող են ի հայտ գալ անհրաժեշտ միջնորդությունը ներկայացնելիս: Բացի այդ, քանի որ 285.6-րդ հոդվածը նախատեսում է քննիչի կողմից կալանքի ժամկետի երկարացնելու միջնորդության ներկայացում հինգ օրվա ընթացքում նախքան խափանման միջոցի կիրառման ժամկետի ավարտը, դատարանը չի տուժի միջնորդությունն ավելի ուշ ներկայացնելուց, երբ պետք է հաշվի առնի այն հարցի բոլոր տեսանկյունները, թե արդյոք երկարաձգումն արդարացված է:

263. *Հետևաբար, 1-ին պարբերությունը պետք է փոփոխվի՝ երաշխավորելու, որ նախատեսված ժամկետում միջնորդություն չներկայացնելը չպետք է բացառի դատարանի կողմից մեղադրյալի պնդումների քննությունը, թե ինչու նրա կալանքը չպետք է երկարացվի կամ ինչու պետք է ընդունվեն խափանման այլ միջոցներ:*

Հոդված 292. Ապացուցողական գործողություն կատարելու միջնորդությունը

264.4-րդ պարբերությամբ նախատեսված այն պահանջը, թե թվային կամ հեռախոսային գաղտնալսմանն առնչվող գաղտնի քննչական գործողությունը կատարելու վերաբերյալ միջնորդությունը պետք է պարունակի նաև համապատասխան հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն, ընդհանուր առմամբ, տեղին է: Այդուհանդերձ, այն հաշվի չի առնում այն իրավիճակները, երբ համարը կամ հասցեն հայտնի չեն: Թեև նման իրավիճակներում կարելի է դիմել Բջջային բաժանորդի միջազգային նույնացուցիչ (IMSI) որսացող և համակարգչի ինտերնետային հաղորդակարգի (IP) հասցեների համակարգերին, սակայն պարզ չէ, թե արդյոք դրանց կիրառումը կկարգավորվի սույն դրույթով:

265. *Եթե նպատակը դրանց կիրառության բացառումը չէ, պարբերությունը պետք է փոփոխվի՝ դա թույլ տալու նպատակով:*

Հոդված 294. Մեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության նկատմամբ դատական երաշխիքների շրջանակը,
Հոդված 298. Մեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու միջնորդությունը և դրա քննությունը

266. Ինչպես արդեն նշվել է[33], Օրենսգրքի նախագիծը նախատեսում է, որ սեփականությունը կարող է արգելադրվել քննիչի կողմից առանց նախնական դատական թույլտվության և փոխարենը ենթակա է հետագա դատական վերահսկողության: Արդեն նշվել է, որ դա անհամապատասխան կլինի Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հրատապ միջամտության անհրաժեշտություն է եղել: Այդուհանդերձ, ներկա դրույթները, ընդհանուր առմամբ, պատշաճ են այնպիսի իրավիճակների նկատմամբ դատական վերահսկողության դեպքում, երբ արգելադրումը պահանջել է նման միջամտություն առանց նախնական դատական թույլտվության: Մեկ թերություն կա՝ կապված 298-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված՝ վեցամսյա ժամկետի հետ, որի ընթացքում արգելադրված գույքի սեփականատերը, դրա նկատմամբ գույքային շահ ունեցող այլ անձը կամ նրանց ներկայացուցիչն իրավունք ունեն մինչդատական վարույթի ընթացքում միջնորդություն ներկայացնել դատարան գույքի արգելադրումը վերացնելու մասին: Թեև այս ժամանակահատվածը մեծամասամբ դեպքերում կարող է խնդրահարույց չլինել, ինչպես ճանաչում են նախորդող դրույթները, կարող են լինել իրավիճակներ, երբ մարդիկ տեղյակ չեն արգելադրման մասին և կարող են չափազանց ուշ հայտնաբերել միջնորդություն ներկայացնելու համար:

267. *Ուստի 298.1-րդ հոդվածը պետք է փոփոխվի՝ նշելու, որ այս ժամանակահատվածը հաշվարկվում է այն պահից, երբ տվյալ անձը տեղեկացել է արգելադրման մասին: Բացի այդ, 294-298-րդ հոդվածներն անհրաժեշտ է վերանայել՝ հաշվի առնելու դրանց կիրառելիությունն այնպիսի իրավիճակներում, որոնցում հնարավոր չի եղել նախնական դատական թույլտվություն ստանալ արգելադրման համար:*

Հոդված 299. Մինչդատական ակտերի իրավաչափության դատական երաշխիքների շրջանակը

268. Այս դրույթի մանրամասն ձևակերպումն այնպիսին է, որ արդյունքում դյուրին չէ բացահայտել, թե որ որոշումները կամ գործողությունները ենթակա չեն բողոքարկման: Ավելի հստակ կլինի պարզապես նշել այն որոշումները, որոնք բողոքարկման ենթակա չեն:

269. *Ուստի այս դրույթը պետք է համապատասխանաբար վերանայվի:*

Հոդված 300. Մինչդատական ակտի դատական բողոքարկման ընթացակարգը

[33] Տես վերևում՝ պարբերություններ 203-204:

270. Պահանջը, որ մինչդատական ակտերի դեմ բողոքները կարող են ներկայացվել դատարան միայն իրավասու դատախազին բողոքարկելու դեպքում, արտացոլում է այն վերահսկող դերը, որ վերջինն ունի մինչդատական քննության իրականացման ոլորտում: Սակայն քանի որ նման բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար 38(11)-րդ հոդվածով որևէ ժամկետ չի նախատեսվում, ներկա դրույթից պարզ չէ, թե արդյոք այս հարցը կարող է քննվել դատարանում միայն դրանից հետո, թե՝ ոչ:

271. *Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել, թե արդյոք դատարան ներկայացվող բողոքը պետք է սպասի մինչև դատախազի կողմից որոշում կայացնելը, իսկ եթե այո, ապա այդ որոշման համար պետք է սահմանվի երեք օրվա ժամկետի խիստ սահմանափակում:*

Հոդված 309. Ցուցմունքի դեպոնացման ընթացակարգը

272. Այս և նախորդող երեք հոդվածները նախատեսված են դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու կամ դատաքննության ընթացքում իրավաչափորեն ցուցմունք չտալու հիմնավոր ենթադրության պարագայում մեղադրյալից (այսինքն՝ խոստովանությունը) և վկաներից մինչդատական ցուցմունքների ստացման պատշաճությունն ապահովելու համար[34]: Սակայն ներկա դրույթը հիմնականում վերաբերում է մեղադրյալի ցուցմունքների դեպոնացմանը: Թեև սույն դրույթի բովանդակությունը, ընդհանուր առմամբ, պատշաճ է, անհրաժեշտ է նշել, որ 2-րդ պարբերության մեջ նախատեսվում է վարույթի հետաձգում միայն մեկ դեպքում, եթե պաշտպանը չի ներկայանում համապատասխան դատական նիստին: Արդյունքում մեղադրյալի ցուցմունքների դեպոնացումը կարող է կատարվել այնպիսի հանգամանքներում, երբ նրան հասանելի չէ փաստաբանի օգնությունը, ինչը կարող է խնդրահարույց դարձնել ցանկացած դեպոնացում Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին պարբերության տեսանկյունից: Պաշտպանի միտումնավոր չմասնակցելու պատճառով դատական վարույթի խափանումը փորձել կանխելը, անշուշտ, պատշաճ է, սակայն 2-րդ պարբերությունը հաշվի չի առնում չմասնակցելու հնարավոր հիմնավոր պատճառները և չի նախատեսում մեղադրյալի իրավաբանական ներկայացվածության երաշխավորումը:

273. *Ուստի նպատակահարմար կլիներ թույլ տալ լրացուցիչ հետաձգումներ պաշտպանի բացակայության հիմնավոր պատճառների առկայության*

[34] Հոդված 306:

դեպքում, և տրամադրել մեղադրյալին այլընտրանքային իրավաբանական ներկայացվածություն, եթե պաշտպանի բացակայությունն արդարացված չէ։

274. Այս հոդվածի 8-րդ պարբերությամբ նախատեսվում է մինչդատական փուլում դեպոնացման ձայնային արձանագրությունը։ Թեև սա օգտակար է, այն չի կարող նույնքան բավարար լինել, որքան տեսաձայնագրությունը, որը հնարավորություն է ընձեռում դատարանին տեսնելու հարցաքննության ողջ գործընթացը։

275. *Ուստի նպատակահարմար կլիներ պահանջել, որպեսզի ցուցմունքների դեպոնացումը տեսաձայնագրվեր։*

Բաժին 10. Դատաքննությունն առաջին ատյանում

Հոդված 310. Նախնական դատալսումներ նշանակելը

276. 3-րդ պարբերությամբ պահանջվում է, որպեսզի դատարանը քրեական գործը վերադարձնի դատախազին՝ առանց նախնական դատալսումներ անցկացնելու մասին որոշում կայացնելու, եթե պահպանված չէ 206-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված ժամկետը։ Համաձայն այդ դրույթի՝ պահանջվում է, որ եթե մեղադրյալը կալանավորված է, ապա մեղադրական եզրակացությունը քրեական գործի հետ միասին դատարան է հանձնվում մեղադրյալի կալանքի ժամկետի ավարտից առնվազն 15 օր առաջ։ Ոչ միայն պարզ չէ, թե ինչ նպատակով են մշակված 3-րդ պարբերության և 206.2-րդ հոդվածի պահանջները, այլև թե ինչպիսին կլինեն հետևանքները համապատասխան գործի քննության համար։ Արդյո՞ք դա այդպիսով կավարտվի, թե կարող է հետագայում քրեական գործը փոխանցվել դատարանին։ Երկրորդ դեպքում հնարավորություն է ի հայտ գալիս, որ գործը հակասության մեջ կմտնի Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին պարբերության՝ ողջամիտ ժամկետներում լուծվելու պահանջի հետ։

277. *Ուստի անհրաժեշտ է հստակեցնել թե՛ այս պահանջների հիմնավորումը և թե՛ դրանք չկատարելուց բխող հետևանքները։*

Հոդված 313. Ինքնաբացարկը, բացարկը և վարույթին մասնակցելուց ազատելու հարցի քննարկումը

278.2-րդ պարբերությունից պարզ չէ, թե ինչ ընթացակարգ է հետևում, եթե այդպիսին հետևում է, եթե դատավորը մերժում է իրեն հայտնված բացարկը։

279. *Ուստի պետք է հստակեցվի, թե ինչ պետք է հետևի, սակայն եթե ներկայում ոչինչ նախատեսված չէ, ապա ցանկալի կլիներ, որ նման մերժումը ենթակա լիներ բողոքարկման։*

Հոդված 314. Վարույթի ընդդատության հարցի քննարկումը

280. Այս դրույթի ձևակերպումն այնպիսի տպավորություն է թողնում, որ վարույթի ընդդատյա չլինելը պարզվում է միայն ի պաշտոնե դատարանի կողմից։ Սակայն դրա մասին կարող են հավասարապես հարց բարձրացնել կողմերից մեկը կամ մի քանիսը։

281. *Ուստի նպատակահարմար կլիներ սույն դրույթում հստակ նշել այս վերջին հնարավորության մասին։*

Հոդված 320. Ապացույցների թույլատրելիության հարցի քննարկումը

282. Այս դրույթի ձևակերպման համաձայն՝ ապացույցների թույլատրելիության վերաբերյալ հարցի քննարկում պահանջվում է միայն այն դեպքում, երբ այն բարձրացնում է կողմերից որևէ մեկը։ Սակայն այս հարցը կարող է ծագել նաև դատավորի մոտ՝ ի պաշտոնե, և դա տեղին կլիներ, եթե տվյալ ապացույցին հիմնվելը համատեղելի չլիներ Եվրոպական կոնվենցիային։

283. *Ուստի սույն դրույթը պետք է փոփոխվի այնպես, որ դատավորը կոնկրետ ապացույցի թույլատրելիության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում կողմերից կարողանա պահանջել պնդումներ ներկայացնել այս հարցի շուրջ։*

Հոդված 322. Հիմնական դատալսումներ նշանակելը

284. Այս դրույթը հաշվի չի առնում այն հնարավորությունը, որ դատարանն իրավունք չունի նշանակել հիմնական դատալսումներ այն դեպքերում, երբ հաստատվել է, որ վարույթն այդ դատարանին ընդդատյա չէ։

285. *Ուստի նպատակահարմար կլիներ 1-ին պարբերության վերջում ավելացնել «եթե դատարանը չի հայտարարել, որ վարույթն իրեն ընդդատյա չէ» արտահայտությունը։*

Հոդված 323. Հիմնական դատալսումների սկիզբը

286. Սույն դրույթով նախատեսված կարգավորումները՝ բացառելու արդեն հարցաքննված վկաների և չհարցաքննված վկաների միջև հաղորդակցումը, տեղին են: Այդուհանդերձ, անդրադարձ չի կատարվել հարցաքննության սպասող վկաների կողմից իրենց ցուցմունքները համաձայնեցնելու հնարավորությանը:

287. *Ուստի նպատակահարմար կլիներ նախատեսել հնարավորություն՝ պահանջելու վկաներից սպասել առանձին, երբ առկա է նրանց գաղտնի համաձայնության գալու հնարավորության մտահոգություն:*

Հոդված 326. Հարցաքննության ընդհանուր կարգը

288. 3-րդ պարբերությամբ նախատեսված՝ դատարանի կողմից անձի ի պաշտոնե հարցաքննության կանչվելու հնարավորությունը հակասում է մրցակցայնության սկզբունքին, մասնավորապես, եթե այդ վկան և նրա ցուցմունքները մինչդատական արձանագրության մեջ չեն: Նման դեպքերում դա կարող է ազդել դրա անկողմնակալության վրա:

289. *Ուստի ուշադրություն պետք է դարձվի՝ սահմանափակելու կամ հանելու այս հնարավորությունը:*

Հոդված 329. Անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննության առանձնահատկությունները

290. Սույն դրույթով անչափահասներին հարցաքննելու համար նախատեսված կարգավորումները, ընդհանուր առմամբ, անպատշաճ չեն: Սակայն նախընտրելի կլիներ, եթե նման հարցաքննությունն իրականացվեր պատշաճ վերապատրաստված հոգեբանի կողմից կամ առնվազն նրա վերահսկողությամբ: Բացի այդ, կախված անչափահասի տարիքից և հոգեբանի խորհրդից՝ նրանց համար կարող է ավելի նպատակահարմար լինել հարցաքննության ենթարկվել միայն մինչդատական փուլում:

291. *Ուստի սույն դրույթի ձևակերպումն անհրաժեշտ է վերանայել՝ հաշվի առնելով նշված մտահոգությունները:*

Հոդված 333. Այլ ապացուցողական գործողություններ կատարելը

292. 2-րդ և 3-րդ պարբերությունները նախատեսում են փորձաքննության իրականացում դատավարության ընթացքում: Այդուհանդերձ, սա պետք է դիտարկվի որպես բացառիկ, քանի որ ընդհանրապես սա պետք է կատարված լինի նախքան դատավարական փուլի մեկնարկը:

293. *Ուստի այս դրույթը պետք է փոփոխվի՝ պահանջելու պատշաճ հիմնավորում նման բացառիկ քայլի համար։*

294. 4-րդ և 5-րդ պարբերություններով նախատեսված՝ դատարանի կողմից ի պաշտոնե առարկաներ և այլ ապացույցներ պահանջելու և զննում կամ քննում կատարելու հնարավորությունը հակասում է մրցակցայնության սկզբունքին և կարող է ազդել դրա անկողմնակալության վրա։

295. *Ուստի այս հնարավորությունները պետք է հանվեն 4-րդ և 5-րդ պարբերություններից։*

Հոդված 334. Հետազոտման ենթակա ապացույցների ծավալը լրացնելը

296. 4-րդ պարբերությամբ նախատեսված՝ դատարանի՝ ի պաշտոնե ապացույցների ծավալը լրացնելու միջոցներ ձեռնարկելու իրավասությունը հակասում է մրցակցայնության սկզբունքին և կարող է ազդել դրա անկողմնակալության վրա, թեկուզև այս հնարավորությունը սահմանափակված է այն դեպքերով, երբ դատարանը գտնում է, որ դա չանելը «կարող է կասկածի տակ դնել վարույթի արդարացիությունը»։

297. *Ուստի նպատակահարմար կլիներ փոխարինել այս հնարավորությունը և պահանջել կողմերից հաշվի առնել, թե արդյոք նման միջոցներն անհրաժեշտ են։*

Հոդված 335. Ապացույցների անթույլատրելիության հարցի քննարկումը

298. Ինչպես և 320-րդ հոդվածում, այս դրույթը հաշվի է առնում միայն կողմերի հնարավորությունը՝ բարձրացնելու ապացույցների անթույլատրելիության հարցը, մինչդեռ այն կարող է օրինականորեն ծագել դատավորի մոտ։ Ինչպես նշվեց 320-րդ հոդվածի հետ կապված, նման դեպքերում դատավորի համար պատշաճ կլիներ կողմերից պահանջել պնդումներ ներկայացնել այս հարցի շուրջ նախքան որոշում կայացնելը։

299. *Հետևաբար, այս դրույթը պետք է ներդաշնակեցվի 320-րդ հոդվածի համար առաջարկված փոփոխության հետ։*

Հոդված 342. Վերդիկտ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա հարցերը

300. 5-րդ պարբերության պահանջը՝ մեղադրյալի մեղսունակության հարցը ևս մեկ անգամ քննարկելու վերաբերյալ, այն դեպքում, երբ «նախաքննության

կամ դատաքննության ժամանակ առաջացել է մեղադրյալի մեղսունակության կամ վարույթի իրականացման ժամանակ նրա կողմից իր գործողությունների համար հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ունակության հարցը, որի կապակցությամբ նշանակված է եղել դատահոգեբուժական փորձաքննություն», ոչ բավարար ճշգրիտ է թվում, քանի որ այս փուլում առկա է ոչ թե պարզապես քննարկման, այլ եզրակացության կարիք։

301. *Անհրաժեշտ է այս դրույթը ձևակերպել ավելի ճշգրիտ։*

Հոդված 344. Վերդիկտը հրապարակելը

302. 2-րդ պարբերությունը հնարավորություն է ընձեռում դատարանին վերդիկտը հրապարակելուց հետո ներկայացնել միջնորդություններ լրացուցիչ դատալսումներում հետազոտման ենթակա ապացույցների վերաբերյալ, սակայն չի նշվում, թե ինչին այդ ապացույցները կարող են վերաբերել։ Ուստի հասկանալի չէ, թե արդյոք այդ ապացույցները կարող են վերաբերել նոր կամ նոր բացահայտված փաստերի, ինչը պատշաճ չի թվում, թե դրանք կարևոր են պատժի սահմանման համար դատապարտման վճռի դեպքում կամ վճարման ենթակա փոխհատուցման գնահատման համար արդարացման վճռի դեպքում։

303. *Ուստի անհրաժեշտ է հստակեցնել, թե որն է լրացուցիչ ապացույցների վերաբերյալ դատալսումների առարկան գործով վերդիկտի հրապարակումից հետո։*

Բաժին 11. Դատական վերանայումը

Հոդված 352. Դատական վերանայման կառուցակարգերը

304. Այս դրույթի և հաջորդող հոդվածների կարգավորումները վճռաբեկության վերաբերյալ բավականին անսովոր են եվրոպական քրեական վարույթներում, քանի որ դրանք, կարծես, նախատեսում են, որ դա կիրառելի է նույնիսկ այն միջանկյալ որոշումների նկատմամբ, որոնք ենթակա են եղել հատուկ վերանայման վերաքննիչ դատարանում։ Արդյունքում Գերագույն դատարանը դառնում է գրեթե սովորական ատյան՝ առաջացնելով ահռելի աշխատանքային ծանրաբեռնվածություն, որն այնուհետև պետք է սահմանափակվի ընդունելիության հիմքերով։ Հնարավոր խնդիրները,

որոնք կարող են ի հայտ գալ՝ վճռաբեկ դատարանի ընդդատության շրջանակն ընդլայնելու միջոցով և ապա թույլ տալով սահմանափակել իր սեփական իրավասություններն ընդունելիության փուլում, կարող են հանգեցնել որոշակի անհամապատասխանությունների որոշումների կայացման ընթացքում: Ավելին, նույնիսկ ընդունելիության հետ կապված որոշումների կայացումը բավականին ժամանակատար կլինի:

305. *Ուստի ուշադրություն պետք է դարձվի, թե արդյոք սա իսկապես վճռաբեկ վերանայման ամենապատշաճ մոդելն է, որը պետք է ընդունվի:*

Հոդված 353. Դատական վերանայման բողոք բերելու իրավունքը

306. «Վարույթին չմասնակցած անձանց» դատական վերանայման բողոք բերելու հնարավորություն ընձեռելու հիմնավորումը հասկանալի չէ, և եվրոպական գործելակերպին բնորոշ չէ վարույթի կողմ չհանդիսացողներին թույլատրել այս կերպ միջամտել վարույթին:

307. *Քանի որ այս հնարավորությունը կարող է պահպանվել, ուստի առաջին հերթին անհրաժեշտ է հստակեցնել այս հնարավորությունը ստեղծելու պատճառները և բացատրել, թե ինչու սա չի վնասի վարույթի կողմ հանդիսացողների շահերին:*

Հոդված 381. Վճռաբեկ բողոքը

308. Թվում է, որ հղումը 386-րդ հոդվածի 1-ին պարբերությանը պետք է այժմ լինի 380-րդ հոդվածին:

309. *Անհրաժեշտ է շտկել հղումը:*

Հոդված 403. Բացառիկ վերանայման բողոք բերելու հիմքերը

310. Ելնելով այն ենթադրությունից, որ առաջարկությունը վերաբերում է արդարացումից հետո գործը վերաբացելուն, անհրաժեշտ է նշել, որ այս դրույթում օգտագործված՝ «անհայտ մնացած այլ նոր հանգամանքներ» ձևակերպումը նույնական չէ Թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության հետ, մասնավորապես՝ «նոր կամ նոր բացահայտված փաստեր», որոնք թույլ են տալիս գործը վերաբացել՝ չոտնահարելով կրկնակի անգամ դատվելու արգելքը: Ամեն դեպքում վտանգ կա, որ երկու ձևակերպումներից որևէ մեկին հղում կատարելով վարույթի վերաբացումը գործնականում հիմնված չի լինի որևէ նոր բանի, այլ կդառնա գործիք՝ հերքելու փակված վարույթը, որը պարզապես չեն կարողացել պարզել

դատարանին հասանելի բոլոր համապատասխան փաստերը: Սա ակնհայտորեն անհամատեղելի կլիներ Թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության, ինչպես նաև իրավական որոշակիության սկզբունքի հետ: Բացի այդ, նման դրույթը վտանգավոր է՝ նկատի առնելով վերջին դրույթի վերաբերյալ ստվար նախադեպային իրավունքի բացակայությունը:

311. *Ուստի առայժմ ուշադրություն պետք է դարձվի արդարացումից հետո գործի վերաբացումը թույլ տալու խելամտությանը, սակայն ամեն դեպքում կիրառվող ձևակերպումը պետք է հետևի Թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության ձևակերպմանը:*

Բաժին 12. Առանձին անձանց նկատմամբ իրականացվող վարույթների առանձնահատկությունները

Հոդված 415. Անչափահասի ձերբակալումը կամ կալանավորումը

312. Թվում է՝ որոշ անհամապատասխանություն կա այս դրույթում անչափահասի կալանավորման առավելագույն ժամկետի ամրագրման հետ կապված, քանի որ մինչդատական վարույթի դեպքում առավելագույն ժամկետը պետք է լինի մեկ ամիս, սակայն նախատեսված են նաև ավելի երկար ժամկետներ:

313. *Անհրաժեշտ է պարզեցնել այս դրույթը և երաշխավորել դրա ընդհանուր կապակցվածությունը:*

Հոդված 417. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով քրեական հետապնդումը դադարեցնելը

314. Այս դրույթը, կարծես, որևէ կարգավորում չի նախատեսում դադարեցման մասին որոշմանը տուժողին ներգրավելու վերաբերյալ:

315. *Անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ դեր կարող է խաղալ տուժողը դադարեցման վերաբերյալ ցանկացած որոշման մեջ և ներառել այդպիսի դեր, եթե Օրենսգրքի նախագծով որևէ նման դեր նախատեսված չէ:*

Բաժին 13. Առանձին տեսակի վարույթների իրականացման առանձնահատկությունները

Հոդված 443. Մասնավոր մեղադրանքով նախնական դատաքննությունը և
Հոդված 444. Մասնավոր մեղադրանքով հիմնական դատաքննությունը

316. Քրեական հայցով հաշտության վերաբերյալ դրույթն այս երկու հոդվածներում չի հստակեցնում, թե արդյոք հաշտության համաձայնությունների պահանջները, որոնք նշված են 447-րդ հոդվածում և կիրառվում են հանրային մեղադրանքով դատաքննություններում, կիրառելի են նաև մասնավոր մեղադրանքով դատաքննություններում հաշտության համաձայնություններ կայացնելիս: Անշուշտ, առաջին հոդվածի 2-րդ և երկրորդ հոդվածի 4-րդ պարբերություններում նշված վերապահումը, որ «օրենքին հակասող համաձայնությունը» չի հաստատվում դատարանի կողմից, բավարար չէ այս նպատակի համար: Առանց նշված պահանջների կիրառելիության՝ հնարավոր է, որ որոշ հաշտության համաձայնություններ անհամատեղելի համարվեն Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին պարբերության հետ[35]:

317. *Հետևաբար, անհրաժեշտ է սույն դրույթում պատշաճ երաշխիքներ ներառել՝ ապահովելու, որ ցանկացած հաշտություն ձեռք է բերվում իսկապես կամավոր կերպով, և երկու կողմերն էլ լիարժեքորեն տեղեկացված են գործի փաստերին և իրավական հետևանքներին:*

Բաժին 14. Եզրափակիչ և անցումային դրույթներ

Հոդված 465. Եզրափակիչ դրույթներ

318. Ուժի մեջ մտնելու առաջարկվող ամսաթիվը՝ 2017 թվականի հուլիսի 1-ը, Ազգային ժողովի կողմից Օրենսգրքի նախագծի ակնկալվող ընդունումից հետո շատ վաղ է: Կասկածելի է, թե արդյոք սա քրեական դատավարության մեջ նախատեսվող էական փոփոխությունների համար ներգրավված բոլոր պատասխանատուներին իրոք պատշաճ կերպով նախապատրաստվելու հնարավորություն կընձեռի՝ վերապատրաստման և վարչական

[35] Տես՝ *Նացվլիշվիլին և Տոգոնիձեն ընդդեմ Վրաստանի*, գանգատ թիվ 9043/05, 2014թ. ապրիլի 29:

կարգավորումների առումով այդ փոփոխություններն իրականացնելու նպատակով։

319. *Ուստի ուշադրություն պետք է դարձվի՝ երաշխավորելու, որ Օրենսգրքի նախագծի ընդունման և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվի միջև նախատեսվի առնվազն իննամսյա ժամանակամիջոց։*

Դ. Եզրակացություն

320. Օրենսգրքի նախագիծը 1998թ.-ի Օրենսգրքի տեքստի վերանայման ծավալուն աշխատանքի, դրա կիրառման արդյունքում ի հայտ եկած խնդիրների և եվրոպական չափանիշների պահանջների, մասնավորապես՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում մշակված չափանիշների, գագաթնակետն է։

321. Այն մի շարք առումներով համապատասխան հիմք է ապահովում հանցագործությունների հետաքննության և դատական կարգով հետապնդման համար՝ համաձայն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների՝ միաժամանակ պաշտպանելով հանրային շահերը և քրեական վարքագծի հետևանքով ներգործված շահերը։

322. Այդուհանդերձ, կան տարբեր խնդիրներ, որոնք, ինչպես նշվում է բաժին առ բաժին վերլուծության մեջ, անհրաժեշտ է քննարկել՝ երաշխավորելու, որ Օրենսգրքի նախագիծը լիովին համապատասխանում է եվրոպական չափանիշներին։

323. Առավել կարևոր են այն խնդիրները, որոնք վերաբերում են ձերբակալմանը հետևած իրավունքներին և քննչական տարբեր միջոցների նկատմամբ դատական վերահսկողության իրականացմանը։ Առաջին խնդիրների առնչությամբ պահանջվող փոփոխությունները հիմնականում մանրամասնելու կարիք ունեն, մինչդեռ վերջինների դեպքում պահանջվողները ենթադրում են փոփոխություն համապատասխան դրույթների կառուցվածքում, որպեսզի նշված միջոցների ձեռնարկման համար նախնական դատական վերահսկողությունը դառնա նորմ։

324. Ուշադրություն պահանջող այլ հարցեր են առհասարակ այնպիսիք, որոնք վերաբերում են որոշ կետերի առավել հստակեցմանը կամ սահմանված չափանիշներին համապատասխան դրանք բարելավելուն: Կան նաև դեպքեր, երբ դրույթների ձևակերպումը կարող է շահել որոշ վերակազմավորումից՝ առանց բովանդակության արմատական փոփոխության: Բացի այդ, որոշ դրույթներ կամ դրանց ասպեկտներն ավելորդ են թվում: Սակայն որոշ մեկնաբանություններ միայն վերաբերում են այնպիսի կետերի, որոնք պետք է մտապահել Օրենսգրքի նախագծի ընդունումից հետո, քանի որ պրակտիկան կարող է հակասել մտադրվածին: Այս կապակցությամբ նշվել է, որ Օրենսգրքի նախագծի ընդունման և դրա ուժի մեջ մտնելու միջև բավարար ժամանակամիջոց է անհրաժեշտ, որպեսզի Օրենսգրքի նախագծի ուժի մեջ մտնելու համար պատասխանատուները կարողանան պատշաճ կերպով նախապատրաստվել՝ ստանձնելու այդ պատասխանատվությունը:

325. Եվ վերջապես կան տարբեր կետեր, որտեղ անհրաժեշտ է պարզաբանում, թե ինչ են նախատեսում կամ ինչպես են առնչվում այլ դրույթների հետ, թեև հասկանալի է, որ հստակեցման պահանջը կարող է պայմանավորված լինել տվյալ դրույթների անգլերեն թարգմանության հետ:

326. Առաջարկություններից կամ առաջարկվող գործողություններից ոչ մեկը, ըստ էության, չպետք է մեծ դժվարություն ներկայացնի ընդունման առումով: Բացի այդ, դրանց ընդունումը Քրեական դատավարության օրենսգիրքը կդարձնի եվրոպական չափանիշներին լիովին համահունչ՝ երաշխավորելով, որ քրեական արդարադատության համակարգի նկատմամբ առկա է հանրային լայն վստահություն: